Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(Տեղեկանք-հիմնավորում)

Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան

Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը կազմվել է՝ հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածներով ամրագրված դրույթները:

Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 114,830,301.2 հազար դրամ՝ ծրագրված (ճշտված) 112,862,236.9 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 102%: Ընդ որում՝ Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի վարչական մասով ծրագրված (ճշտված) 112,084,866.8 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 113,494,340.0 հազար դրամ՝ ապահովելով 101.3% կատարողական:



Երևան քաղաքի 2023 թվականի ճշտված բյուջեով սեփական եկամուտները ծրագրվել են 44,355,960.2 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 50,091,031.3 հազար դրամ կամ 113 %: Սեփական եկամուտների փաստացի հավաքագրման

ցուցանիշը ավել է 2022 թվականի համապատասխան ցուցանիշից 14,694,591.9 հազար դրամով:

Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվել է 111,165,737.1 հազար դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 90%-ը: Նախատեսված և փաստացի ծախսված գումարների տարբերությունները հիմնականում պայմանավորված են գնումների գործընթացում առաջացած խնայողություններով, կնքված անցումային պայմանագրերով, պատվիրակված լիազորությունների մասամբ չիրականացմամբ:

Հարկ է նշել, որ 2023 թվականի բյուջեի ծրագրված (ճշտված) 11,232,839.8 հազար դրամ պակասուրդի դիմաց բյուջեն փաստացի կատարվել է 3,664,564.1 հազար դրամ հավելուրդով:

Ստորև ներկայացվում է Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:

Եկամուտներ

Երևանի 2023 թվականի բյուջեի փաստացի եկամուտների 24.2%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և տուրքերի հաշվին, որից 8.6%-ը՝ գույքային հարկեր անշարժ գույքից, 10.8%-ը՝ գույքային հարկեր այլ գույքից, 4.1%-ը՝ տեղական տուրքերից, 0.7%-ը՝ համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերից: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի եկամուտների 19.4%-ը ձևավորվել է պաշտոնական դրամաշնորհներից, 56.4%-ը՝ այլ եկամուտների հաշվին, որից 0.3%-ը՝ շահաբաժիններից, 1.3%-ը՝ գույքի վարձակալության դիմաց եկամուտներից, 37.0%-ը՝ համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից և 15.0%-ը՝ վարչական գանձումներից, 1.3%-ը՝ տույժերից, տուգանքներից, 1.3%-ը՝ այլ եկամուտներից, 0.2 %-ը՝ ընթացիկ և կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներից:

Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտների հավաքագրումը 2023 թվականին կազմում է 22,264,922.1 հազար դրամ, մասնավորապես գույքային հարկեր անշարժ գույքից հավաքագրվել է

9,904,442.7 հազար դրամ՝ որը կազմել է ծրագրվածի 84.4%-ը, որը կազմում է հարկային եկամուտների 44.5%-ը, իսկ փոխադրամիջոցների համար գույքահարկը հավաքագրվել է 12,360,479.4 հազար դրամ՝ ծրագրվածից 389,240.5 հազ. դրամով պակաս, որը իր հերթին կազմում է հարկային եկամուտների 55.5%-ը:

Տեղական տուրքերի մասով եկամտի հավաքագրումը գերակատարվել է՝ փաստացի կազմելով 4,753,916.3 հազար դրամ ծրագրված 3,574,532.5 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 133.0%: Տեղական տուրքերի կազմում 51.4% տեսակարար կշիռ է ապահովել արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար փաստացի հավաքագրված 2,441,567.9 հազար դրամ տուրքը, որը գերակատարվել է 1,007,567.9 հազար դրամով: Ոգելից խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի համար տուրքերի մասով մուտքերը կազմել են 631,210.9 հազար դրամ՝ 118.7% ծրագրված 531,770.5 հազար դրամի դիմաց:

Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար տուրքերը գերակատարվել են 16.3%-ով, համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքներ կատարելու թույլտվության համար տուրքերը կատարվել են 99.6%-ով, համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տուրքերը կատարվել են 104.7%-ով:

Այսպիսով, հարկային եկամուտների և տուրքերի մասով 2023 թվականի փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 27,796,852.9 հազար դրամ՝ ծրագրված 28,557,383.2 հազար դրամի նկատմամբ:

Այդ թվում՝

-Անշարժ գույքի հարկի և գույքահարկի գծով փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 22,218,857.0 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 24,268,077.3 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 91.6%,

-Տեղական տուրքերի գծով փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 4,753,916.3 հազար դրամ՝ նախատեսված 3,574,532.5 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 133.0%,

-Պետական տուրքերի գծով փաստացի հավաքագրվել է 788,014.5 հազար դրամ՝ ծրագրված 500,000.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 155.6%, որից.

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 130,275.2 հազար դրամ 100,000.0-ի դիմաց,
- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 647,739.3 հազար դրամ՝ 400,000.0-ի դիմաց:

Պաշտոնական դրամաշնորհներ.

Պաշտոնական դրամաշնորհների մասով մուտքերը կազմել են 22,314,021.6 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 23,073,533.3 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 96.7%, որից ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գծով փաստացի մուտքերը կազմել են 13,430,355.1 հազար դրամ, համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով 410,165.6 հազար դրամ, համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով 654,691.7 հազար դրամ, իսկ ՀՀ պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով տրամադրվող նպատակային հատկացումներից (սուբվենցիաներից) մուտքերը՝ 7,463,097.8 հազար դրամ և կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները՝ 355,711.5 հազար դրամ:

Այլ եկամուտներ.

Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեով այլ եկամուտների գծով նախատեսված էր 61,231,320.4 հազար դրամի մուտքեր, որի դիմաց փաստացի հավաքագրվել է 64,719,426.7 հազար դրամ, որից.

-շահաբաժինների գծով փաստացի մուտքերը կազմել են 356,708.9 հազար դրամ՝ նախատեսված 93,727.3 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 380.6%,

-գույքի (այդ թվում հողերի) վարձակալությունից եկամուտների գծով փաստացի մուտքերը կազմել են 1,495,919.6 հազար դրամ, ծրագրված 1,848,408.5 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 80.9%,

-պետության կողմից կրթության, մետրոպոլիտենի կառավարման, քաղաքային լուսավորության, կոշտ թափոնների կառավարման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների գործունեության կազմակերպման, պետական կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման, ինչպես նաև քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ոլորտներում Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ՀՀ պետական բյուջեից ստացվող միջոցների գծով փաստացի եկամուտները կազմել են՝ 42,425,248.3 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 45,432,743.4 հազար դրամի դիմաց կամ 93.4%-ը,

-օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարների գծով փաստացի կատարողականը կազմել է 30,999.6 հազար դրամ,

-տեղական վճարների գծով փաստացի եկամուտները կազմել են՝ 16,650,711.7 հազար դրամ, նախատեսված 11,058,171.2 հազար դրամի նկատմամբ կամ նախատեսվածի 150.6%-ը, ինչը հիմնականում պայմանավորված է ճարտարապետանախագծային առաջադրանքների դիմաց վճարների, աղբահանության վճարների, ինչպես նաև ավտոկայանատեղի վճարների գծով կանխատեսված և փաստացի հավաքագրված ցուցանիշների տարբերությամբ:

-ինքնակամ կառույցների օրինականացման վճարների մասով փաստացի մուտքերը կազմել են 576,365.1 հազար դրամ, որը պակաս է ծրագրված 990,000.0 հազար դրամից 413,634.9 հազար դրամով,

-վարչական իրավախախտումներից փաստացի մուտքերը կազմել են 1,391,251.8 հազար դրամ, նախատեսված 572,700.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսվածի 242.9%-ը,

-համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից մուտքերը նախատեսված 5,000.0 հազար դրամի դիմաց կազմել են 76,938.0 հազար դրամ,

-Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանց և կազմակերպությունների համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուրներից մուտքերը կազմել են 254,000.0 դրամ

-համայնքի գույքին պատճառված վնասների փոխհատուցումից մուտքերը կազմել են 71,558.0 հազար դրամ 15,000.0-ի դիմաց, կամ 477.1%:

-օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով մուտքերը կազմել են 1,381,855.8 հազար դրամ՝ նախատեսված 1,211,020.0 հազար դրամի դիմաց:

Ծախսեր

Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 111,165,737.1 հազար դրամի ծախսեր՝ ծրագրված (ճշտված) 124,095,076.7 հազար դրամի դիմաց կամ ծրագրվածի 90.0%-ը: Ընդամենը փաստացի ծախսերից 100,129,048.0 հազար դրամն ուղղվել են ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), իսկ 21,993,577.9 հազար դրամը՝ կապիտալ բնույթի զուտ ծախսերին (ֆոնդային բյուջե): Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը կազմել են 7,839,156.4 հազար դրամ:

Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի ծախսերի ծավալներում գերակշիռ են սոցիալական բնագավառի (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն) ծախսերը, որոնց տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ կազմում է 35.3%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերինը՝ 27.9%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերինը՝ 12.2%:

Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի ունի հետևյալ պատկերը.



Կամ աղյուսակի տեսքով՝

հազար դրամ

h/h	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը	Տարեկան ճշտված բյուջեով նախատեսված	Փաստացի ծախս	Կատարման %
1	Աշխատանքի վարձատրություն	11,813,498.7	11,664,437.5	98.7%
2	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	13,886,453.7	11,726,706.3	84.4%
3	Տոկոսավճարներ	39,539.8	32,420.3	82.0%
4	Սուբսիդիաներ	46,292,471.8	46,083,315.8	99.5%
5	Դրամաշնորհներ	1,379,427.1	909,603.3	65.9%
6	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	1,669,922.6	1,328,493.7	79.6%
7	Այլ ծախսեր	29,317,715.5	25,266,338.5	86.2%
8	Հիմնական միջոցներ	27,924,149.3	21,993,578.0	78.8%
9	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-3,087,095.2	-250,715.3	8.1%
10	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	-5,141,006.6	-7,588,441.1	147.6%
	Ընդամենը	124,095,076.7	111,165,737.1	89.6%

Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների ունի հետևյալ պատկերը.



Կամ՝

հազար դրամ

հ/հ	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժնի անվանումը	Տարեկան (ճշտված) բյուջեով նախատեսված	Փաստացի կատարված	Կատարման %
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	13,170,440.5	12,000,915.1	91.1%
2	Պաշտպանություն	176,751.3	80,276.7	45.4%
3	Տնտեսական հարաբերություններ	32,467,781.6	28,045,033.7	86.4%
4	Շրջակա միջավայրի պաշտպանություն	15,223,934.3	13,577,319.5	89.2%
5	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	10,931,139.0	8,992,826.6	82.3%
6	Առողջապահություն	1,297,906.6	1,045,549.7	80.6%
7	Հանգիստ, մշակույթ և կրոն	8,238,962.7	7,341,600.4	89.1%
8	Կրթություն	38,006,781.6	36,478,630.2	96.0%
9	Սոցիալական պաշպանություն	1,959,049.3	1,729,044.6	88.3%
10	Պահուստային ֆոնդեր	2,622,329.8	1,874,540.7	71.5%
	Ընդամենը	124,095,076.7	111,165,737.1	89.6%

Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի կատարողականն ըստ վարչական շրջանների և Երևանի քաղաքապետարանի (առանց վարչական շրջանների) հետևյալն է՝

հազար դրամ

հ/հ	Վարչական շրջանի անվանումը	բյուջեով նախատեսվածը	փաստացի ծախսը	Կատարման %-ը նախատեսվածի նկատմամբ
1	Երևանի քաղաքապետարան (առանց վարչական շրջանների)	90,616,334.1	80,229,301.5	88.5%
2	Աջափնյակ	3,560,212.2	3,312,387.1	93.0%
3	Ավան	1,682,869.2	1,628,747.0	96.8%
4	Արաբկիր	3,226,395.5	3,039,632.3	94.2%
5	Դավթաշեն	1,686,420.0	1,518,501.6	90.0%
6	Էրեբունի	2,410,013.6	2,322,089.0	96.4%
7	Կենտրոն	3,910,656.8	3,430,118.0	87.7%
8	Մալաթիա-Սեբաստիա	3,740,114.6	3,531,567.9	94.4%
9	Նոր Նորք	4,336,779.1	4,073,809.9	93.9%
10	Նորք-Մարաշ	910,550.4	717,937.8	78.8%
11	Նուբարաշեն	843,435.1	731,416.8	86.7%
12	Շենգավիթ	4,633,131.6	4,291,449.7	92.6%
13	Քանաքեռ-Զեյթուն	2,538,164.5	2,338,778.5	92.1%
	Ընդամենը	124,095,076.7	111,165,737.1	89.6%

Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեով կատարված ծախսերի վերլուծությունը և հիմնավորումը՝ ըստ ծախսային ծրագրերի.

1. **<u>Կառավարման մարմնի պահպանում</u>** ծրագրով 2023 թվականի ճշտված բյուջեով նախատեսվել էր 10,897,451.4 հազար դրամ, որից փաստացի կատարվել է 10,399,881.1 հազար դրամ կամ նախատեսվածի 95.4%–ը, որը ավել է 2022 թվականի փաստացի կատարողական ցուցանիշից 1,151,959.2 հազար դրամով: Ծրագրի գծով 2023 թվականի խնայողությունը կազմել է 497,570.3 հազար դրամ, որից միայն աշխատավարձի և

պարգևատրման գծով ծախսերի տնտեսումը կազմել է 90,748.4 հազար դրամ: Այս ծախսերն իրականացվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի (այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկի՝ «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային կառավարչական հիմնարկի) կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին (ներառյալ վարչական շրջաններին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում աշխատավարձի գծով ծախսերը կազմում են՝ 7,492,524.3 հազար դրամ՝ նախատեսված 7,570,164.1 հազար դրամի դիմաց կամ 99.0%: Աշխատավարձի գծով ծախսերն իրականացվել են Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 29-ի N 10-Ա և 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշումներով սահմանված հաստիքացուցակի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ որում հաստատված (ճշտված) հաստիքացուցակով նախատեսված 2,020 միավոր հաստիքի դիմաց աշխատավարձի փաստացի վճարում իրականացվել է միջինը 1853 հաստիքի համար:

Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի աշխատողների պարգևատրման գծով ծախսերը կազմել են 733,131.4 հազար դրամ՝ նախատեսված 746,240.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 98.2%:

Էներգետիկ ծառայությունների գծով ծախսերը կազմել են 191,627.7 հազար դրամ՝ նախատեսված 230,278.9 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 83.2%, որը ներառում է Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների վարչական շենքերի էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը:

Կոմունալ ծառայությունները ներառում են վարչական շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև միջատազերծման ծառայությունների հետ կապված ծախսերը, որի գծով փաստացի ֆինանսավորումը կազմել է 14,759.8 հազար դրամ նախատեսված 21,642.3 հազար դրամի դիմաց:

Կապի ծառայությունների գծով ծախսերը կազմել են 286,305.1 հազար դրամ՝ նախատեսված 430,784.3 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 66.5%, որը

ավել է 2022 թվականի փաստացի կատարողական ցուցանիշից 79,573.3 հազար դրամով, և ներառում են փոստային, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և օպտիկական կապուղու ծառայությունների, պլանշետների շահագործումն ապահովող VPN քարտերի սպասարկում համար տրամադրված գումարները:

Ապահովագրական ծախսերը կազմել են 39,305.0 հազար դրամ՝ նախատեսված 42,859.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 91.7%, որն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի (ներառյալ՝ վարչական շրջանների) հաշվեկշռում հաշվառված թվով 98 ավտոմեքենաների պարտադիր ապահովագրական ծախսերին:

Գույքի և սարքավորումների վարձակալության գծով ծախսերը կազմել են 41,897.5 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 78.2%, որը ավել է 2022 թվականի փաստացի ցուցանիշից 6,880.1 հազար դրամով: Այս գումարի շրջանակներում տարեսկզբից ապահովվել է քաղաքապետարանի թվով 8 ծառայողական ավտոմեքենաների վարձակալությունը, որը ներառում է նաև այդ ավտոմեքենաների ընթացիկ նորոգումը, վառելիքի ծախսը և այլն:

Ներքին գործուղումների գծով ծախսը կազմել է 30.0 հազար դրամ՝ ճշտված 50.0 հազար դրամի դիմաց, կատարողականը կազմել է 60.0 %:

Արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը կազմել են 19,665.8 հազար դրամ՝ նախատեսված 30,637.3 հազար դրամի դիմաց, կատարողականը կազմել է 64.2 %, կամ խնայողությունը կազմել է 10,971.5 հազար դրամ: Գործուղումներ են կազմակերպվել դեպի Թեհրան, Աբու Դաբի, Նիժնի Նովգորոդ, Էստոնիա, Նովոսիբիրսկ, ՉԺՀ՝ Ցինդաո, Նեապոլ, Սամարղանդ, Փարիզ, Դուբայ, Բարսելոնա, Մոլդովա, Մանչեստր: Բոլոր ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներով:

Վարչական ծառայությունների գծով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում գրքերի (փաստաթղթերի) կարման և թարգմանչական ծառայությունների համար ծախսերը կազմել են 6,871.4 հազար դրամ՝ նախատեսված 12,155.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 56.5%, որը պակաս է 2022 թվականի փաստացի ցուցանիշից 50.7 հազար դրամով:

Համակարգչային ծառայությունների գծով ծախսերը կազմել են 72,771.3 հազար դրամ՝ նախատեսված 76,568.8 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 95.0%-ով, ինչը ներառում է քաղաքապետարանի Community համայնքի եկամուտների կառավարման էլեկտրոնային համակարգի, Dimum.yerevan.am էլեկտրոնային համակարգի տեխ. սպասարկման և ծրագրային ապահովման, գույքահարկի, հողի հարկի, տեղական տուրքերի, աղբահանության վճարների և հողի վարձակալության հաշվառման (բազայի) սպասարկման, Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգի կողմից մատակարարված համակարգչային, Մալբրի ծրագրային ապահովման սպասարկման, վճարումների ընդունման առցանց համակարգի և գանձապետական համակարգչային առկա ծրագրերի սպասարկման, ինչպես նաև հաճախորդների կառավարման համակարգի և մատնահետքով վերահսկման, ՀԾ համակարգի սպասարկման ծառայությունները:

Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների գծով նախատեսված 18,484.0 հազար դրամի դիմաց կատարվել է 14,165.5 հազար դրամի ծախս: Հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 16.11.2022թ. N3116-Ա հրամանը, իրականացվել է թվով 192 համայնքային ծառայողների վերապատրաստման և MS Excel ծրագրի, աշխատանքնային օրենսգրքի փոփոխությունների ուսուցման ծառայությունը:

Տեղեկատվական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 11,851.9 հազար դրամ՝ նախատեսված 22,731.7 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 52.1%-ով: Այս ծախսերը ներառում են տպագրական, տեղեկատվական տեսաձրագրերի արտադրության, լրատվամիջոցներում տեղեկատվությունների հրապարակման, թվային տպագրության, 2D հոլովակի պատրաստման, թերթերում հայտարարությունների տպագրման ծառայությունների ձեռք բերման ծախսերը:

Կառավարչական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 4,429.9 հազար դրամ՝ նախատեսված 4,500.0 հազար դրամի դիմաց կամ 98.4%-ով, ինչի շրջանակներում 3,480.0 հազար դրամով իրականացվել է Երևանի քաղաքապետարանի 2022 թվականի բյուջեի անկախ աուդիտ անցկացնելու աուդիտորական մասնագիտացված կազմակերպության ծառայությունը և 949.9 դրամով որպես հավատարմագրային կառավարման պայմանագրով

հաստատված ներդրումային պարտավորությունների հաշվառման և գնահատման ծառայությունը:

Ներկայացուցչական ծախսերի գծով փաստացի կատարողականը կազմել է 125,801.2 հազար դրամ՝ նախատեսված 145,922.6 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է շուրջ 86.2%-ով, ինչի շրջանակներում իրականացվել է Երևան ժամանած պատվիրակությունների ընդունելությունը, հյուրասիրությունը, հուշանվերների ձեռք բերումը: Նշված գումարից 3320.4 հազար դրամ գումարն ուղղվել է 2022 թվականին ստանձնած և չվճարված պարտավորությունների մարմանը:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով ծախսերը կազմում է 52,080.8 հազար դրամ, որից 627.0 հազար դրամը սոցիալական մեդիա մարքետինգի ծառայությունները և 36,633.8 հազար դրամը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերի հասարակական կարգի պահպանման ծառայությանը: Ծրագրի գծով նախատեսված ցուցանիշը կատարվել է 84.0%-ով:

Մասնագիտական ծառայությունների գծով փաստացի ֆինանսավորումը կազմել է 9,525.0 հազար դրամ՝ նախատեսված 14,051.7 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 67.8%-ով, ինչը 873.6 հազար դրամով պակաս է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, իսկ մատուցված ծառայությունները ներառում են փաստաթղթերի արխիվացման, Երևանի քաղաքապետարանին սեփականության իրավունքով պատկանող լրիվ մաշված, դուրս գրման ենթակա հիմնական միջոցների, գույքի գնահատման, տրանսպորտային միջոցների գնահատելու, վերագնահատելու և օտարելու գործընթացի կազմակերպման ծառայությունը, արխիվացման ծառայությունը, գազասպառման համակարգի, հակահրդեհային ծառայության, ԱՀԿ սպասարկման, ինչպես նաև հնոցապանի ծառայությունները:

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով փաստացի կատարողականը կազմել է 249,982.6 հազար դրամ՝ նախատեսված 273,046.9 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 91.6%: Այս հոդվածով նախատեսված գումարների շրջանակներում իրականացվել են քաղաքապետարանի (ներառյալ՝ վարչական շրջանների) հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների պահպանման և նորոգման,

գույքի, համակարգչային տեխնիկայի և շահագործվող այլ սարքավորումների ընթացիկ նորոգումն ու պահպանումը:

Գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածով փաստացի իրականացվել է 49,143.7 հազար դրամի ծախս՝ նախատեսված 61,262.0 հազար դրամի դիմաց կամ կատարվել է 80.2%-ով: Նշված հոդվածի շրջանակներում ձեռք են բերվել գրասենյակային նյութեր (թուղթ, գրիչ, արագակար, մատիտ, թղթապանակ, ռեգիստր և այլն), իսկ նախատեսված ցուցանիշի նկատմամբ շեղումը պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած տնտեսումներով:

Տրանսպորտային նյութերի գծով փաստացի կատարողականը կազմել է 164,259.6 հազար դրամ՝ նախատեսված 177,400.7 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 92.6%, կամ 29,297.0 հազար դրամով պակաս նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, ինչը ներառում է վարչական շրջաններին սպասարկող ավտոմեքենաների վառելիքի, քսանյութի և անվադողերի ձեռք բերման ծախսերը, ինչպես նաև քաղաքապետարանի աշխատակազմի որոշ ստորաբաժանումների գործառութային առանձնահատկություններով պայմանավորված անձնական ավտոմեքենաները ծառայողական նպատակներով օգտագործման համար տրված վառելիքի ծախսերը:

Կենցաղային և հանրային սննդի նյութերի գծով փաստացի ծախսը կազմել է 23,590.4 հազար դրամ՝ նախատեսված 29,679.2 հազար դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել խմելու ջուր, մեկանգամյա օգտագործման բաժակներ, տնտեսական ապրանքներ:

Հատուկ նպատակային այլ նյութերի գծով փաստացի կատարողականը կազմել է 11,420.9 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 24,857.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 45.9% և ներառում է տոնական և հիշատակի օրերի, ինչպես նաև այլ միջոցառումների համար նախատեսված մեդալների, ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերման ծախսերը:

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին հոդվածով փաստացի կատարողականը կազմել է 305,256.2 հազար դրամ, նախատեսվածի (ճշտված) չափով, կամ կատարողականը կազմել է 100.0%: Այն իրենից ներկայացնում է «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի պահպանման ծախսերը,

այդ թվում՝ մաքրման ծառայությունները, նյութերի ձեռքբերումը, ընթացիկ այլ աշխատանքներ:

Այլ նպաստներ բյուջեից հոդվածով փաստացի կատարողականը կազմել է 46,561.0 հազար դրամ՝ նախատեսված 58,500.0 հազար դրամի դիմաց, ինչի շրջանակներում «Երևան քաղաքի ավագանու անդամներին դրամական փոխհատուցում տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 27-ի N 28-Ա և 2021 թվականի հոկտեմբերի 26-ի 454-Ա որոշումներով սահմանված կարգով կատարված ծախսերի դիմաց փոխհատուցում է վճարվել Երևան քաղաքի ավագանու անդամներին:

Ընթացիկ դրամաշնորհներ պետական առևտրային կազմակերպություններին հոդվածով ծախսը կազմել է 28,046,3 հազար դրամ նախատեսված 28,400.0 հազար դրամի դիմաց՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակիցների փոխադրումը աշխատանքային օրերին չորս ուղղություններով կազմակերպելու համար:

Պարտադիր վճարների գծով փաստացի կատարողականը կազմել է 2,669.0 հազար դրամ՝ նախատեսված 8,720.4 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվել և իրականացվել են քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված մեքենաների տեխնիկական զննման և տուրքերի վճարման ծախսերը:

Այլ ծախսեր հոդվածով նախատեսված 356.0 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել:

Վարչական սարքավորումների գծով փաստացի ծախսը կազմել է 227,969.6 հազար դրամ՝ նախատեսված 267,369.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 85.3%, ինչը 90,744.4 հազար դրամով ավել է 2022 թվականի նույն ցուցանիշից: Այն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում անհրաժեշտ գույքի ձեռք բերմանը, ինչպես նաև շահագործման համար ոչ պիտանի գույքի և տեխնիկայի (այդ թվում՝ համակարգչային) փոխարինմանը:

Այլ մեքենաներ և սարքավորումներ հոդվածով նախատեսված 153,609.5 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 152,908.3 հազար դրամ, որը ուղղվել է աշխատակազմի ստորաբաժանումներում անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերմանը: Մասնավորապես, նշված գումարից 146,509.5 հազար դրամը ուղղվել է 2022թվականի պարտքի մարմանը և ձեռք են բերվել շտրիխ կոդի կիրառման համակարգչային ծրագրային

փաթեթներ, ջեռուցման սարքեր և սերվերային սենյակի սարքավորումներ, 3,428.8 հազար դրամով ձեռք են բերվել մատնահետք կարդացող սարք, բարձր ճնշման սարք և ֆանկոլներ:

Ոչ նյութական հիմնական միջոցներ հոդվածով փաստացի ծախսը կազմել է 21,330.0 հազար դրամ՝ նախատեսված 26,330.0 հազար դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում իրականացվել է տվյալների անվտանգության և հակավիրուսային համակարգչային փաթեթների արտոնագրերի երկարացում, LSFinance գանձապետական համակարգի արդիականացման ծառայություն:

2. Վարչական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 390,086.4 հազար դրամ նախորդ տարվա ծախսից 104,410.8 հազար դրամով ավելի՝ նախատեսված 499,698.1 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 78.1%: Նշված գումարից 108,219.1 հազար դրամը ուղղվել է 2022 թվականի պարտքի մարմանը, որից 46,416.0 հազար դրամը՝ Երևանի քաղաքապետարանի Արգիշտի 1 հասցեի ադմինիստրատիվ շենքի ֆոտովոլտային համակարգի տեղադրման աշխատանքներին: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Երևանի քաղաքապետարանի Բյուզանդի 1/3 հասցեի վարչական շենքի արխիվի թվով 1 սենյակի վերանորոգման, սանհանգույցների օդափոխության և ջրահեռացման համակարգի և 6-րդ հարկի նորոգման աշխատանքներ: Հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել Երևանի քաղաքապետարանի Արգիշտի 1 հասցեի վարչական շենքի փոքր դահլիճում, 224/1, 121, 122, 123, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 512, 513, 514 աշխատասենյակներում, ինչպես նաև կաթսայատան գազամատակարարման համակարգը փոխարինվել է նորով, Բյուզանդի 1/3 և Արգիշտի 1 հասցեներում տեղադրվել են ֆոտովոլտային համակարգեր: Ձեռք են բերվել թվով 13 հատ հրդեհաշիջման կրակմարիչներ: Իրականացվել են ընթացիկ նորոգման աշխատանքներ նաև Ավան, Դավթաշեն, Մալաթիա-Սեբաստիա, Նորք Մարաշ, Քանաքեռ-Զեյթուն վարչական շենքերում, հիմնանորոգվել են Կենտրոն վարչական շենքի նախասրահը և աշխատասենյակները, իրականացվել են Նոր Նորք վարչական շենքի գծանցումների ընթացիկ նորոգման և Շենգավիթ վարչական շենքի կոնֆերանս սրահի ձևավորման աշխատանքներ: Կառուցվել է Նուբարաշեն վարչական շրջանի վարչական շենքը 86,845.3 հազար դրամով:

2. **<u>Երևան քաղաքին միջազգային վարկանիշ շնորհելու</u> ծրագրով** նախատեսված 17,000.0 հազար դրամի դիմաց իրականացվել է 15,889.9 հազար դրամի ծախս: Fitch միջազգային վարկանիշային գործակալությունը Երևան քաղաքին շնորհվել է երկարաժամկետ «B+» վարկանիշը՝ «Դրական» կանխատեսմամբ, սակայն 2022 թվականին հաշիվ չի ներկայացրել վճարման համար: «Ֆիչ Ռեյթինգս» (Fitch Ratings) միջազգային վարկանիշային գործակալությունը 2022 թվականի դեկտեմբերին վերահաստատել էր Երևանի վարկանիշը՝ հանրային ֆինանսների բնագավառում սահմանելով այն «B+» մակարդակում՝ «Կայուն» կանխատեսմամբ, իսկ 2023 թվականի փետրվարի 10-ին վաղաժամկետ (Երևանի վարկանիշավորման հերթական գործընթացը ծրագրված էր 2023 թվականի հունիսին) փոխել է Երևանի «B+» մակարդակում հեռանկարը «Կայուն» կանխատեսումից «Դրական» կանխատեսման:

3. **<u>Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 32,042.3 հազար դրամ՝ նախատեսված 33,983.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 94.3%: Այս ծրագրով բոլոր ծախսերը իրականացվել են ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից՝ որպես պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորություններ:

4. **<u>Նախագծային աշխատանքներ</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 834,239.3 հազար դրամ՝ նախատեսված 1,358,436.9 հազար դրամի դիմաց, ինչպես նաև 2022 թվականի փաստացի ցուցանիշից 150,297.5 հազար դրամով ավելի: Նշված գումարի շրջանակներում ձեռք են բերվել ինչպես Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեով, այնպես էլ Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեով նախատեսված որոշ կապիտալ ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերը: Աջափնյակ թաղամասի մետրոպոլիտենի կայարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման նպատակով վճարվել է 537,900.0 հազար դրամ:

5. **<u>Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարներ և գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ</u>** ծրագրերով փաստացի ծախսը կազմել է

328,776.2 հազար դրամ՝ նախատեսված 363,871.1 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 90.4%: Ծրագրերի շրջանակներում իրականացվել են դատարան դիմելու պետական տուրքերի, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գրանցման և գնահատման հետ կապված ծախսերը:

6. <u>Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն</u> ծրագրով փաստացի ծախսը կազմել է 71,336.7 հազար դրամ՝ նախատեսված 157,311.3 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 45.3%, որի շրջանակներում մասնավորապես, 1066.9 հազար դրամն ուղղվել է 2022 թվականին կնքված պայմանագրերի հիման վրա հակահրդեհային հիդրանտների վերանորոգման աշխատանքների վճարմանը: Ձեռք են բերվել կրակմարիչներ 3,500.0 հազար դրամով, 3,029.4 հազար դրամով ձեռքբերվել և տեղադրվել են ցուցանակներ, 11250.0 հազար դրամով՝ կառավարման և հսկման համակարգ, 2329.0 հազար դրամով իրականացվել է էլեկտրաշչակների վերանորոգման և ընթացիկ սպասարկման աշխատանքներ: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել զգեստապահարաններ, համակարգիչներ, պլանշետներ և այլ վարչական սարքավորումներ, կրակմարիչներ, տեսապրոյեկտորներ, էլեկտրական ակոսիչներ /դռել/, լիցքավորիչներ, գործիքների հավաքածուներ:

***7.* <u>Զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցություն</u>** ծրագրով ծախս չի կատարվել:

***8.* <u>Այլընտրանքային աշխատանքային ծառայություն</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 8,940.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված)-ի չափով, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 100.0%: Ծրագրով իրականացվել է հաշվետու տարվա ընթացքում զորակոչի արդյունքում Երևանի ենթակայության կազմակերպություններում՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն», «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» և «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ում այլընտրանքային աշխատանքային ծառայողներին կատարվող վճարումները:

9. <u>Իրավախախտ շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման և պահպանման ծառայություն</u> ծրագրով նախատեսված 19,057.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 11,447.0 հազար դրամ՝ 60.1%: Ծրագրով

թվով 16 իրավախախտ շրջիկ առևտրի կետերը և տրանսպորտային միջոցները տեղափոխվել են հատուկ տարածք:

10. <u>Ինքնակամ տեղադրված առևտրի ծառայությունների մատուցման օբյեկտների ապամոնտաժման, տեղափոխման և պահպանման ծառայություններ</u> ծրագրով իրականացվել է 16,500.0 հազար դրամի ծախս՝ նախատեսվածի չափով, իրականացվել է շուրջ 110 ինքնակամ տեղադրված օբյեկտների ապամոնտաժման և տեղափոխման ծառայություն:

11. <u>Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում</u> ծրագրով փաստացի ծախսը կազմել է 337,678.2 հազար դրամ նախորդ տարվա համեմատ 207,385.8 հազարով ավելի՝ նախատեսված 678,720.4 հազար դրամի դիմաց: Ծրագրի կատարողականը կազմել է 49.8%: Նշված գումարից 12,303.9 հազար դրամն ուղղվել է Ա. Խաչատրյան փողոցի ոռոգման համակարգի կառուցման 2022 թվականին ստանձնած պարտավորությունների պարտքի մարմանը: Իրականացվել են Նոր Արեշի 7-րդ փողոցի (Հին Կինո) ոռոգման ցանցի կառուցման աշխատանքներ, Արղության-Գրիբոյեդով, Վրացական, Մալխասյանց փողոցի ոռոգման ջրագծերի կառուցման, Կենտրոնի Պուշկին, Կողբացի, Դեմիրճյան, Արամի փողոցի, Մանուշի պուրակի ոռոգման ցանցի կառուցման, Նոր Նորք վարչական շրջանի (Գյուլիքևխյան, Բ. Մուրադյան փողոցների) ոռոգման ջրագծի կառուցման, Կոմիտասի անվան պանթեոնի այգում խորքային հորի վերակառուցման, Ազատամարտիկների 5-րդ նրբանցքի (Նուխի դաշտ) ոռոգման ցանցի կառուցման և Էրեբունի վարչական շրջանի Մուրացան 113 հասցեում ոռոգման ցանցի կառուցման աշխատանքներ:

12. <u>Պետական աջակցությամբ իրականացվող Նոր Խարբերդ թաղամասում գազատարի կառուցում</u> ծրագրով փաստացի ծախսը կազմել է 385,244.2 հազար դրամ՝ նախատեսված 520,585.4 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 74.0%:

13. <u>Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության ծրագիր» և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության դրամաշնորհային ծրագիր և Երևանի էներգաարդյունավետության ծրագրի համաֆինանսավորում</u> ծրագրերով իրականացվել է 1,368,215.7 հազար դրամի ծախս նախատեսված 1,888,783.4 հազար դրամի դիմաց, որի

շրջանակներում հիմնանորոգման աշխատանքներ են սկսվել և իրականացվել Երևանի թվով 14 մանկապարտեզներում: Նշված գումարից 32,420.3 հազար դրամն ուղղվել է ստացված վարկի տոկոսավճարի մարմանը, իսկ 229,014.3 հազար դրամ գումարը տրամադրվել է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից որպես կապիտալ սուբվենցիա՝ ԱԱՀ-ի վճարման համար: Ծրագրի շրջանակներում շուրջ 35 մանկապարտեզներում 179,845.8 հազար դրամով իրականացվել են հորիզոնական միջոցառումներ, մասնավորապես տեղադրվել են ֆոտովոլտային արևային համակարգեր, արևային ջրատաքացուցիչներ և նախագծվել, վերանորոգվել և տեղադրվել են լուսադիոդային լուսատուներ:

14. **<u>Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում</u>** ծրագրով փաստացի կատարողականը կազմել է 2,571,192.9 հազար դրամ՝ 2022 թվականի համապատասխան ցուցանիշից 544,747.6 հազար դրամով պակաս՝ նախատեսված 3,293,857.7 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 78.1%, ինչի շրջանակներում Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների փողոցներում, մայթերում և բակային տարածքներում իրականացվել են շուրջ 10,707.3 հազար քառակուսի մետր մակերեսով ասֆալտ-բետոնյա ծածկի նորոգման և ճաքալցման աշխատանքներ և թվով 914 դիտահորերի ընթացիկ նորոգման աշխատանքներ:

15. **<u>Եզրաքարերի վերանորոգում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 283,483.4 հազար դրամ՝ նախատեսված 319,695.2 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 88.7%, որով բոլոր վարչական շրջաններում իրականացվել են շուրջ 17,449.1 գծմ եզրաքարերի ընթացիկ նորոգման, ինչպես նաև փողոցների հին եզրաքարերի փոխարինման աշխատանքներ: Աշխատանքներ են իրականացվել Խուդյակով փ. (Բրյուսով թաղ.69շ. դիմաց) կանգառում, Իսահակյան թ. 1/2շ.-ի դիմաց, Ավան 6-րդ փող. թիվ 87դպրոց մոտ, Աշխաբադի փողոցում, Ավան-Առինջ թաղ. 1-ին մկշ. 2/10շենքի, Աճառյան 35/43 շենքի դիմաց, Շինարարներ, Բաշինջաղյան փողոցներում, Շաուշի հրապարակում, Նորաշեն 32, 33 շենքերի մոտ, Շինարարների 27, Մազմանյան 5, Հալաբյան 19 շենքերի մոտ, Ա.Խաչատրյան, Տիգրանյան-Վրացական, Ադոնցի, Գյուլբենկյան փողոցներում, Դավթաշեն կաղնուտի այգու տարածքում, Դավթաշեն 2-րդ թաղ. 35, Դավթաշեն 4-րդ թաղ. 45, Դավթաշեն 1-ին թաղ. 3 Ա, 44 ,49, 50, 51, Դավթաշեն 2-րդ թաղ. 26, 44 շենքերի հարակից տարածքներում, 9-րդ փողոցի սկզբնամասում, Տիգրան Պետրոսյան փողոցում,

Դավթաշեն 2-րդ թաղ. այգու հարևանությամբ, Ե. Կողբացի, Տ. Մեծ 51, Չարենց 60, Տ. Մեծ 36բ, Պուշկին 35, 42, Քաջազնունի, թիվ 7 մանկ բակում, Անդրանիկի փողոցից մինչև Մալաթիա տոնավաճառ ճանապարհի միջնաշերտի և Տիչինա փողոցի Ռ.Մելիքյան փողոցը Քուչակի փողոցին միացնող հատվածում, Թևոսյան փողոցում, Բակունցի նրբանցքում, հ. 109 մանկապարտեզի մոտ, Մոլդովական 54-60, Գալշոյան 6, Գայի 14/3, Ն.Ստեփանյան 2/5 շենքերի մոտ, Այծեմնիկ Ուրարտուի, Նորքի 9-րդ, Օհան Դուրյան, Է. Իսաբեկյան և Ա. Արմենակյան փողոցներում, Նուբարաշեն վարչական շրջանի 7, 9 փողոցներում, Նոր Զմյուռնիա, 11-րդ փողոց 23 շենքի բակում, 6-րդ փողոց 1/2 շենքի բակում, Պ.Սևակի փողոցում և Պ.Սևակ-Դրո խաչմերուկի նոր այգում, Նորագավիթ 1-ին փողոցում, Բագրատունյաց 7 շենքի բակ, Նորագավիթ 1-ին փողոց Արարատյան Մանանդյան 33/27 հարակից տարածք Նորագավիթ 1 փողոց Ն. Շենգավիթ 11 փողոց, Նորագավիթ 1 փողոց, Ն. Շենգավիթ 12 փող. Գ.Նժդեհի 28-32, Չեխով 6-10 Չեխովի, Շևչենկո և Շիրակի փողոցներում:

16. <u>Հենապատերի վերանորոգում</u> ծրագրով փաստացի ծախսը կազմել է 131,537.4 հազար դրամ՝ նախատեսված 173,376.1 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 75.9%: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են մասնագիտական ուսումնասիրության արդյունքում առաջնահերթ և հրատապ հիմնանորոգման ենթակա հենապատեր թվով 32 հասցեներում, մասնավորապես Ավան-Առինջ 1-ին մկշ. 2/3, 2/12, Ալմա-Աթա-մարշալ Խուդյակովի խաչմերուկ, Դուրյան 30, Թումանյան 7/1, Ավան-Առինջ 2-րդ մկշ 2/5; 2/6; 1/12; 2/1, Դուրյան 37, 48, Ավան 4-րդ փողոց, Խաչատրյան 4շենքի, Վրացական 4-րդ նրբանցքի 5,7, 5/1 շենքերի դիմաց Վարդաշեն 9-րդ փողոցի, Մ. Խորենացի փող. թ.120 հիմնական դպրոցի հարակից, Քաջազնունու 11 (Քոչար 11), Շրջանային 4/5 շենքի, Օհանով 20 շենքի, Ռաֆֆու 21 շենքի հարակից տարածքում, Թոթովենցի 10/1, Նորքի 4զ. Գյուլիքեխվյան 4 շենքի դիմաց, Նորքի 6զ. Լյուքսեմբուրգի 1-ին նրբ. 6 շենքի դիմաց, Նորքի 6զ. Լյուքսեմբուրգի 2-րդ նրբ. 5 շենքի հետնամաս, թիվ 121 մանկապարտեզ, Ա. Արմենակյան 133/6, թիվ 124 մանկապարտեզ, Գ. Հովսեփյան 62/2, Հիշատակի պուրակի պարիսպ, Սերո Խանզադյան փողոցի արգելապատնեշ, Արագածի վերջնամաս,Գ.Նժդեհի փողոցի գետնացում Գոգոլի 7 և 9, Լեփսուսի 2, Լեփսուսի 4, Լեփսուսի 6, Հասրաթյան 5/2 հասցեներում հենապատերի հիմնանորոգման և

ընթացիկ նորոգման աշխատանքներ, ինչպես նաև կառուցվել է Նորքի 8-րդ զ. 28 շենքի հարակից հենապատը:

17. **<u>Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 59,920.2 հազար դրամ՝ նախատեսված 157,639.3 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում կատարվել են Հանրապետության հրապարակի մետրոյի կայարանի վերգետնյա հատվածի քարե շինության վերանորոգման լրացուցիչ աշխատանքներ, 42,660.9 հազար դրամն ուղղվել է 2022 թվականին սկսված Փակ շուկայի դիմացի ստորգետնյա հետիոտնային անցման հիմնանորոգման աշխատանքների վճարմանը: 9,976.3 հազար դրամն ուղղվել է Փակ շուկայի հարևանությամբ գտնվող գետնանցումի թվով 2 հորիզոնական վերելակների ձեռքբերմանը և տեղադրմանը:

18. **<u>Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 235,842.0 հազար դրամ՝ նախատեսված 405,451.9 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում ֆինանսավորվել են Երևան քաղաքի թվով 43 կամուրջների, էստակադաների, հետիոտն վերգետնյա անցումների, ուղեանցերի, տրանսպորտային հանգույցների և ուղետարերի նորոգման, շահագործման ու պահպանման աշխատանքները:

19. **<u>Հրազդանի կիրճի բարեկարգում</u>** ծրագրով նախատեսված 2,000.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 1.697.4 հազար դրամ, կամ 84.9%, ինչի շրջանակներում իրականացվել են թափվող քարերից տարածքի մաքրման ծառայություններ:

20. **<u>Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 447,209.6 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 658,402.6 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 67.9%, որի շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի փողոցների ճանապարհի նոր մայթերի կառուցման, ինչպես նաև Երևան քաղաքի փողոցների մայթերի վերանորոգման (սալիկապատման) աշխատանքներ, մասնավորապես, աշխատանքներ են իրականացվել հետևյալ հասցեներում՝ Խուդյակով փողոց, Ալմա-Աթա փողոց, Բրյուսով թաղամասի 69 շենքի դիմաց, Իսահակյան թաղամասի 1/2շենք , Ավան 6-րդ փողոցի թիվ 87 դպրոցի մոտ, Խուդյակով փողոցի մայթ, Խուդյակով փողոցի 84/4 շենք, Մազմանյան փողոցի և Լենինգրադյան փողոցի մայթեր, Ադոնց փողոցի, Շիրվանզադե փողոցի խաչմերուկից 77

դպրոց ընկած մայթերի հատված, Ամիրյանից-Սարյան, Սայաթ-Նովա-Աբովյան, Պուշկին 48, Սայաթ-Նովա 14, Մոսկովյան 33, Կողբացի 30, Չարենցի 87, Սայաթ Նովա-կոնսերվատորիայի մայթ, Սարյան 24/1, Ամիրյան–Լեո, Չարենցի 2-րդ նրբ. Տ. Մեծ-Եր. Քոչար, Գալշոյան 10 և 12 շենքերին հարակից մայթեր, Նորքի 5զ. Մառի փ. 166 դպրոցի դիմաց, Նորքի 3զ. Գյուրջյան փ. 163 դպրոցի դիմաց, Նորքի 4զ. Բակունցի նրբ. հ. 109 մմ-ի հետևի տարածք, 9-7-րդ, 11-13-րդ, 9-11-րդ փողոցի 157-րդ դպրոցի հարևանությամբ և Այգեգործական փողոցի, Ուլնեցու 72, 74, 76 շենքերի հարակից տարածք, Ուլնեցու 72/1, Ուլնեցու 70/1, Պ. Սևակի 30շենքեր, թիվ 127 դպրոց, Ուլնեցու 49, 51 շենքեր, Գ. Նժդեհի 12, 14, 16, 18, 24, 28, 30, 32, 34, 36 շենքեր, Ահարոնյան 5 և 7 շենքեր, Շերամի 43 շենք: Իրականացվել են Ա. Արմենակյան 117 հասցեի հարևանությամբ, Նորք-Մարաշ 8-րդ փողոցի աստիճանների և Միքայելյան փողոցի, Կուրղինյան փողոցի, Շերամի փողոցից դեպի Հաղթանակ թաղ. 2-րդ փողոց տանող ճանապարհի ձախակողմյան մայթի կառուցման աշխատանքներ, վերանորոգվել են Ռաֆֆու փողոցի սիզամարգերը: Ծրագրի շրջանակներում ավարտին են հասցվել Մամիկոնյանց և Արամ Խաչատրյան փողոցները միացնող ճանապարհահատվածի կառուցման, Հանրապետության հրապարակի մայթերի սալիկների վերանորոգման, Թամանյան փողոցի ու Թամանյան և Իսահակյան փողոցների հատման մասի վերանորոգման աշխատանքները:

21. **<u>Փողոցների պահպանում և շահագործում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 18,810.2 հազար դրամ՝ նախատեսված 20,400.9 հազար դրամի դիմաց, կատարողականը կազմել է 92.2 %, որի շրջանակներում իրականացվել են 2022թվականին սկսած Երևան քաղաքի Աթենքի փողոցի քարաթափումների կանխարգելման աշխատանքներ:

22. **<u>Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություններ ծրագրով</u>** փաստացի ծախսը կազմում է 430,551.3 հազար դրամ նախատեսված (ճշտված) 431,370.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.8 %: Ծրագրի շրջանակներում 70,551.3 հազար դրամ գումար տրամադրվել է «Երևանտրանս» ՓԲԸ-ին որպես սուբսիդիա՝ Ազատության պողոտայի ստորգետնյա ավտոկայանատեղիի պահպանման համար, իսկ 360,000.0 հազար դրամը՝ «Փարքինգ Սիթի սերվիս» ՓԲԸ-ին Երևան քաղաքում ավտոկայանատեղիի կազմակերպման համար:

23. **<u>Թեքահարթակների կառուցում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 17,581.9 հազար դրամ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից 10,697.6 հազար դրամով ավելի՝ նախատեսված 26,955.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 65.2%, որի շրջանակներում Երևան քաղաքի Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների փողոցների խաչմերուկների մայթերում և բազմաբնակարան շենքերի մուտքերում կառուցվել են թեքահարթակներ:

24. **<u>Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի համակարգում և կառավարում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 136,420.6 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 151,062.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 90.3%: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողություն, ծրագրի ֆինանսական աուդիտ, SS սպասարկում:

25. **<u>Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 255,428.3 հազար դրամ՝ նախատեսված 391,027.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 65.3%, որից 68,145.0 հազար դրամը ուղղվել է 2022թվականի պարտքի մարմանը՝ մաքրման սարքի /ավտոբուսների, տրոլեյբուսների դարպասների լվացման/ ձեռքբերման և գործարկմանը, կանգառասրահների հարդարմանը: Միաժամանակ, 5,229.4 հազար դրամով իրականացվել է այգիներին մատակարարված էլեկտրաէներգիայի վճարումը, 12,539.8 հազար դրամով իրականացվել են վնասված նստարանների, աղբամանների ընթացիկ նորոգման աշխատանքներ, թվով 1346 աղբամաններ և նստարաններ ենթարկվել են ամբողջական նորոգման: 125,085.2 հազար դրամով ձեռք են բերվել և տեղադրվել մետաղական ճաղավանդակներ, աղբամաններ և նստարաններ: Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի գործող կանգառները կահավորվել են թվով 20 նոր կանգառասրահներով:

26. **<u>Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում (պատվիրակված լիազորություններ)</u>** նախատեսված 849,961.6 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմում է 590,189.0 հազար դրամ, կամ 69.4%: Մասնավորապես, ծրագրի շրջանակներում

46,888.4 հազար դրամով իրականացվել է լուսացույցերի էլեկտրաէներգիայի մատակարարման վճարումներ, 10,355.5 հազար դրամով իրականացվել են թվով 14 կոնսուլի, 28 հետիոտնային կանգնակի, 33 տրանսպորտային կանգնակի, 18 հեռակառավարվող լուսային ազդանշանային սարքերի ձեռքբերում տեղադրումով և 27 առկա տրանսպորտային լուսացույցի տեղադրում առկա կոնսուլի կամ կանգնակի վրա, իրականացվել են 1670 քմ սառը պլաստիկով և 2838.72 քմ թերմո պլաստիկով գծանշումներ, 10 սմ-ոց 849434 գծմ, 15 սմ-ոց 629473 գծմ, և ձեռքով 10 սմ-ոց 1056992 գծմ հորիզոնական և ուղղաձիգ գծանշման ծառայություններ, իրականացվել է շուրջ 47876 քմ պահպանապատերի հարդարման և ներկման ծառայություններ, տեղադրվել են թվով 934 ճանապարհային նշաններ, 2.48 քմ տեղեկատվության նշաններ, 297մ 6մմ-ոց ճոպաններ: Ծրագրի շրջանակներում կատարվել են նաև սյուների ներկման, լուսացույցների սպասարկման ծառայություններ:

27. <u>Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</u> ծրագրով ծախսը կազմում է 267,496.9 հազար դրամ՝ նախատեսված 364,824.4 հազար դրամի դիմաց, կամ 73.3%, որով իրականացվել է Արգավանդ-Բաբաջանյան 1 կմ ճանապարհահատվածի տեխնիկական հսկողության, ավտոբուսների դեպոների նախագծային վճարումներ:

28. <u>Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի շարժակազմերի ներդրման ֆինանսական աջակցության ծրագիր և Արևելյան Եվրոպայի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</u> ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 8,388,522.5 հազար դրամ, նախատեսվածի չափով, որի շրջանակներում իրականացվել են 2022 թվականի ձեռքբերված թվով 87 MAN մակնիշի 12 մետրանոց ավտոբուսների վճարումները:

29. <u>Տրանսպորտային համակարգի արդիականացում</u> ծրագրով նախատեսված 6,613,325.6 հազար դրամի դիմաց կատարվել է 6,162,121.2 հազար դրամի ծախս: Նշված ծրագրի շրջանակներում իրականացվել են թվով 150 ավտոբուսների, և 15 տրոլեյբուսների

ձեռքբերման նպատակով ZHONGTONG BUS HOLDING CO LTD և YUTONG BUS CO LTD ընկերությունների հետ կնքված պայմանագրերի մնացորդային վճարումները՝ ընդհանուր 6,045,999.8 հազար դրամի չափով, 2,701.2 հազար դրամով իրականացվել են ավտոբուսների մաքսատուրքի վճարումներ: Ջրվեժի (Թևոսյան 5) ավտոկայանատեղիի և ենթակառուցվածքների քանդման և ապամոնտաժման աշխատանքներն իրականացվել է 42,247.1 հազար դրամով, 71,172.1 հազար դրամն ուղղվել է Լենինգրադյան 16 հասցեի վարչական շենքի՝ որպես կառավարչական կենտրոնի վերակառուցման աշխատանքներին:

30. **<u>«Երևանտրանս» ՓԲԸ-ի տարածքի բարեկարգում</u>** ծրագրով նախատեսված 6,653.8 հազար դրամի դիմաց փաստացի 5,790.3 հազար դրամով իրականացվել են «Երևանտրանս» ՓԲԸ-ի տարածքի փակ ավտոլվացման կետի ջրահեռացման համակարգի նորոգման աշխատանքներ:

31. **<u>Պետական աջակցությամբ իրականացվող ճանապարհների կառուցում և միջին նորոգում</u>** ծրագրով իրականացվել է 1,279,654.0 հազար դրամի ծախս՝ նախատեսված 1,401,478.4 հազար դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում 1,089,543.6 հազար դրամով իրականացվել են Էրեբունի, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների փողոցների 203 հազար քմ միջին նորոգման աշխատանքներ, թվով 350 դիտահորերի ուղղում և 190,110.4 հազար դրամով սկսվել են Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան փողոցը Սարալանջին միացնող ճանապարհի կառուցման աշխատանքներ:

32. **<u>Վերելակների հիմնանորոգում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,070,656.6 հազար դրամ՝ նախատեսված 1,096,741.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 97.6%, որի շրջանակներում 1,045,807.4 հազար դրամով ձեռք են բերվել և տեղադրվել շուրջ 110 նոր վերելակ, իսկ 24,849.2 հազար դրամով թվով 4 վարչական շրջաններում իրականացվել են վերելակների ընթացիկ նորոգման, դետալների փոփոխման աշխատանքներ: 270.2 հազար դրամով իրականացվել է Արաբկիր վարչական շրջանի վերելակների փորձաքննություն:

33. **<u>Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,712,500.0 հազար դրամ՝

նախատեսվածի չափով, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

34. <u>Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություններ</u> ծրագրով փաստացի ծախսը կազմել է 628,000.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

35. <u>Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ, ինչպես նաև Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագրերով (պատվիրակված լիազորություններ)</u> ծրագրերով իրականացվել է 347,986.3 հազար դրամի ծախս՝ նախատեսված 956,900 հազար դրամի դիմաց և իրականացվել է դրենաժային թունելի երկարացում և մետրոյի թունելներում վերականգնողական աշխատանքներ դրենաժային թունելի հատակի, պատի կառուցում, բետոնացման աշխատանքներ որոշ հատվածներում իսկ թունելներում՝ հակակոռոզիոն աշխատանքներ___դրենաժային միջոցառումներ՝ ներթափանցող ջրի ուղղորդում դեպի դրենաժային թունել, ամրակապի հորատանցում ջրի հավաքագրման համար:

36. <u>Խողովակաշարերի կառուցում և վերակառուցում</u> ծրագրով նախատեսված 360.0 հազար դրամն ուղղվել է 2022թվականին Նուբարաշեն վարչական շրջանի Մասիս Ա Այգետարածքային հարակից տարածքի ջրագծի արտաքին ցանցի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայության վճարումներին:

37. <u>Պետական աջակցությամբ իրականացվող բազմաբնակարան շենքերի վերելակների արդիականացում</u> ծրագրով նախատեսված 4,102,069.7 հազար դրամ գումարի դիմաց փաստացի ծախսը կազմում է 3,999,840.0 հազար դրամ, որի շրջանակներում ձեռքբերվել և տեղադրվել են շուրջ 400 նոր վերելակ:

38. <u>Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների նորոգում (պատվիրակված լիազորություններ)</u> ծրագրով 1,322,620.0 հազար դրամ նախատեսված գումարի շրջանակներում իրականացվել է 925,631.5 հազար դրամի ծախս, կամ կատարողականը

կազմել է 70.0%, որի շրջանակներում 479,560.0 հազար դրամով Երևանի մետրոպոլիտենում տեղադրվել և ապամոնտաժվել են շուրջ 6 թունելային հզոր օդափոխիչներ, 224,460.0 հազար դրամով փոխվել են ռելսեր, իսկ 221,611.5 հազար դրամով ձեռք են բերվել թվով 16 անվազույգեր:

39. **<u>Զբոսաշրջության զարգացում</u>** ծրագրով նախատեսված 30,500.0 հազար դրամի դիմաց իրականացվել է 866.9 հազար դրամի ծախս, որով իրականացվել են թվային տպագրության աշխատանքներ:

40. **<u>Դրոշների տեղադրում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 11,719.5 հազար դրամ՝ նախատեսված 54,140.0 հազար դրամի դիմաց, որն պակաս է 2022թ. նույն ցուցանիշից 16,112.2 հազար դրամով, որի շրջանակներում ձեռք են բերվել և փոխվել են ՀՀ դրոշներ Երևան քաղաքի փողոցներում, Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում , մանկապարտեզներում, երաժշտական և արվեստի դպրոցներում, այլ մշակութային կազմակերպություններում, սպորտ-դպրոցներում և շախմատի դպրոցներում, իրականացվել են դրոշների հիմնային պատվանդանների նորոգման աշխատանքներ:

41. **<u>Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանների պահպանման համար</u>** ծրագրով իրականացվել է 267,354.2 հազար դրամի ծախս՝ նախատեսված 282,854.2 հազար դրամի դինմաց, որով սուբսիդավորվել է «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ը:

42. **<u>Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 328,714.9 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչն ուղղվել է քաղաքապետարանի ծրագրային ապահովում և ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի սուբսիդավորմանը:

43. **<u>Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 853,732.0 հազար դրամ՝ նախատեսված 868,862.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.3%, որի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել կրթական, մշակութային, բժշկական և այլ՝ կազմակերպությունների (ՀՈԱԿ, ՊՈԱԿ, ՓԲԸ, հասարակական կազմակերպություն և այլն),

44. **<u>Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր</u>** ծրագրով փաստացի մուտքերը համայնքի սեփականություն հանդիսացող գույքի, այդ թվում՝ հողի իրացումից մուտքերի մասով կազմել են 7,839,156.4 հազար դրամ նախատեսված 8,228,101.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 95.3%:

45. **<u>Տոնական ձևավորում</u>** ծրագրով նախատեսված 339,406.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 310,363.7 հազար դրամ, կամ 91.4%: Ծրագրի շրջանակներում, մասնավորապես, 202,406.0 հազար դրամով իրականացվել է տոնական լույսերի և պարագաների տեղադրում, ընթացիկ նորոգում, 1,800.0 հազար դրամով իրականացվել է տոնական լույսերի և պարագաների պահեստավորում, իսկ 32,357.6 հազար դրամը ուղղվել է «Ձևավորում և սպասարկում» ՀՈԱԿ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

46. **<u>Հատակագծի նախապատրաստման և կազմման աշխատանքներ</u>** ծրագրով կատարվել է 20,508.8 հազար դրամի ծախս նախատեսված 44,370.0 հազար դրամի դիմաց, և կատարողականը կազմում է 46.2%: Գումարը որպես սուբսիդիա տրամադրվել է <<Քաղաքաշինություն>> ՓԲԸ-ին՝ հատակագծերի կազմման աշխատանքների համար:

47. **<u>Ներդրումային ծրագրերի իրականացում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 170,000.0 հազար դրամ՝ նախատեսված 176,000.0 հազար դրամի դիմաց, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 96.6%, որն էլ ամբողջությամբ ուղղվել է «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի սուբսիդավորմանը:

48. **<u>Հրատապ լուծում պահանջող ընթացիկ շինարարական աշխատանքների իրականացում</u>** ծրագրով ծախսը կազմել է 833,151.3 հազար դրամ 957,193.5 հազար դրամի դիմաց, որն ուղղվել է Երևան քաղաքում հրատապ լուծում պահանջող շինարարական աշխատանքների իրականացմանը, մասնավորապես, 22,532.0 հազար դրամն ուղղվել է Մուշեղ Իշխանի անվան հ. 5 հիմնական դպրոցի և Լևոն Շանթի անվան հ. 4 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի տանիքի և առաստաղի ընթացիկ նորոգմանը, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեից տրամադրված 84,862.0 հազար դրամ գումարը ուղղվել է Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմի արդյունքում Արցախից ՀՀ ժամանած քաղաքացիներին Արցախ տեղափոխելու տրանսպորտային փոխադրումներին և հյուրանոցային ծառայությունների վճարումներին:

49. **<u>Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար մատչելիության ապահովում</u>** ծրագրով ծախս չի կատարվել:

50. **<u>Աղբահանություն և սանիտարական մաքրում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 446,803.5 հազար դրամ՝ նախատեսված 451,689.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.9%, որի շրջանակներում մասնավորապես իրականացվել են Հրազդան և Գետառ գետերի վրա կառուցված աղբահանման պատնեշի վրա կուտակված աղբի հավաքման և կանաչ ու ջրային տարածքներում աղբի հավաքման և տեղափոխման ծառայություններ, իրականացվել են կենցաղային աղբի համար նախատեսված կոնտեյներներին տեղադրման համար հարթակների ընթացիկ նորոգման և կառուցման աշխատանքներ, 196,000.0 հազար դրամով ձեռք է բերվել թվով 4 հատ ՄԱՋ աղբատար մեքենաներ, 34,600.5 հազար դրամով ձեռք են բերվել թվով 50 հատ խոզանակով մաքրող-ավլող ինքնագնաց մեքենաներ:

51. **<u>Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 252,412.1 հազար դրամ՝ նախատեսված 254,416.2 հազ. դրամի դիմաց, որի շրջանակներում իրականացվել է բազմաբնակարան շենքերի աղբամուղերի խցանման մաքրման, աղբընդունիչների վերանորոգման, ախտահանման, վարչական շրջաններում կուտակված շինարարական աղբի բարձման, տեղափոխման ծառայություններ:

52. **<u>«Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի պահպանման ծախսեր</u>** ծրագրով նախատեսված 6,807,979.1 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 6,714,894.5 հազար դրամ, կամ 98.6%, որն դրամն ուղղվել է Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում սանմաքրման (այդ թվում՝ ձյան մաքրման) և աղբահանության աշխատանքներին:

53. **<u>«Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիր» ծրագրի շրջանակներում մասհանումների գծով մարումների տրամադրում</u>** ծրագրով իրականացվել է 4,644.0 հազար դրամի ծախս՝ նախատեսված 10,000.0 հազար դրամի դիմաց, կամ 46.4%, որն ուղղվել է ենթավարկային պայմանագրի մասհանման գծով պարտավորությունների կատարմանը:

54. **<u>Ջրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 991,234.3 հազար դրամ՝ 2022թ. փաստացի ծախսից 283,506.6 հազար դրամով ավելի՝ նախատեսված 1,102,297.8 հազար դրամի դիմաց, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 89.9%, որի շրջանակներում հեղեղատար համակարգերի կառուցման աշխատանքներ են իրականացվել հետևյալ հասցեներում՝ Ավան վարչական շրջանի Նարեկացի 38-41, Դուրյան 28-30 շենքեր, Աջափնյակ վարչական շրջանի Գր. Զոհրապ փողոց, Հալաբյան 3, 5, 7 և 9 շենքեր, Ազատամարտիկների փ. 87 շենք, Ազատության պողոտա 14, Աթոյան անցուղի 7-ից 10 հասցե, հ. 176 դպրոցից մինչև հ.79 մանկապարտեզ, Աջափնյակ հ. 111 դպրոցից մինչև Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհ, Բաշինջաղյան փ. 1-ին նրբ., Ավան-Առինջ 2 մ/շ 1/13շ-Ավան-Առինջ 2/4շենք, Ավան-Առինջ թաղ. 1-ին միկ. 1/8 շենքից 5 շենք, Հ. Քոչարի 1-ին նրբանցք, Դավթաշեն 1-ին թաղ. 27 շենքից 27/1 շենք, Նորք-Մարաշ վ/շ-Նորքի 1-ին նրբանցքի կապուղի, Աթոյան անցուղի 7 հ.10, Խաղաղ Դոնի փողոց 1, 5, 23, 27, 31 շենքեր, Էրեբունի փողոցի 34 շենք, Բուռնազյան փողոցի 1շենք, Տիգրան Մեծի պողոտա 53 շենքից դեպի կամուրջ, Նար-Դոսի փողոց 75, Հ. Քոչարի 1-ին նրբանցք, Նանսենի փող.22 /հ. 100մանկապարտեզ/, Գյուլիքևխյան 29 շենքից 34շենք, Նուբարաշեն 12փ. 4շ հարակից հասցեի Այգեգործական փող-Նորքի 1 փողոց, Նորագավիթ 7 փող. 53, Բայդուկովի փողոց, Շինարարների 15/1 և 15/2 շենքեր, Մ. Ավետիսյան 4 փ. 1-13 և Լեփսիուսի 2-4 տներ, Սարկավագի փողոց, Բուռնազյան փ.1 շենք, Մոլդովական 29/1 շենքից 29/6 շենք, Ն. Շենգավիթ 15 փողոցի կոյուղագծերի վերակառուցման, Մուշական, 6 փ. 29 /հ. 101 դպրոց/ ջրագծի կառուցման, Ավանեսովի 3նրբանցք /160դպրոց/, Կոմիտասի պողոտա 1: Իրականացվել են նաև Նոր Դալմա ջրատարի սկզբնամասից մինչև նոր կառուցվող ջրատարի և Սիլիկյան գնացող ջրատարից նոր ջրատարի կառուցման աշխատանքներ:

55. **<u>Գետերի հունների մաքրում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 38,683.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով:

56. **<u>Շրջակա միջավայրի և օդի աղտոտման դեմ միջոցառումների իրականացում</u>** ծրագրով 16,960.3 հազար դրամի դիմաց իրականացվել է 12,968.0 հազար դրամի ծախս, կամ կատարողականը կազմել է 76.5%, որի շրջանակներում դրամաշնորհ է տրամադրվել «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ին՝ Նուբարաշենի բիոգազի հավաքման և այրման կայանի սպասարկման նպատակով:

57. **<u>Կանաչ տարածքների հիմնում և պահպանում</u>** ծրագրով նախատեսված 4,241,113.6 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 4,194,552.0 հազար դրամ՝ 2022թ. փաստացի իրականացված ծախսից 475,693.1 հազար դրամով ավելի, որից մասնավորապես, 3,850,000.0 հազար դրամը տրամադրվել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ին որպես սուբսիդիա, 148,143.6 հազար դրամով ձեռք են բերվել թվով 3 ավտոաշտարակներ և հատուկ մասնագիտացված մեքենաներ, ինչպես նաև 145,641.6 հազար դրամով ձեռք են բերվել ծառեր և թփեր:

58. **<u>Ախտահանման և միջատազերծման ծառայություններ (դեռատիզացիա)</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 25,697.2 հազար դրամ՝ նախատեսված 27,359.2 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 93.9%, որի շրջանակներում վարչական շրջանների տարբեր հատվածներում (աղբի կոնտեյներների հարակից տարածքներ, մանկապարտեզներ, առանձնակի դեպքերում՝ բազմաբնակարան շենքեր), իրականացվել են դեռատիզացիոն աշխատանքներ:

59. **<u>Հասարակական զուգարանների պահպանում և վերանորոգում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 6,190.0 հազար դրամ՝ նախատեսված 10,520.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 58.8%, որի շրջանակներում Շենգավիթ և Էրեբունի վարչական շրջաններում իրականացվել են հասարակական զուգարանների պահպանման և մաքրման աշխատանքներ:

60. **<u>Թափառող կենդանիների վնասազերծում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 294,972.1 հազար դրամ՝ նախատեսված 294,972.1 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 100.0%, որի շրջանակներում կենտրոն են տեղափոխվել թվով 3436 շուն, որից 2045-ը ստերջացվել են, 753-ը վերապատվաստվել, 104-ը՝ որդեգրվել, քնեցման են ենթարկվել և ավտովթարի հետևանքով անկել են 603-ը /ներառյալ լեյշմանիոզով վարակված ծներ, ժանտախտ/, չեն ստերջացվել 35 շուն, փողոցներից հավաքվել են 467 դիեր:

61. **<u>Երեւան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարմանն առնչվող ընդհանուր մարտահրավերների շուրջ՝ աշխատանքների իրականացում և Երեւան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարմանն</u>**

<u>առնչվող ընդհանուր մարտահրավերների շուրջ դրամաշնորհային ծրագրի իրականացում</u> ծրագրերով ծախսը կազմում է 410,165.6 հազար դրամ՝ նախատեսված 1,445,193.3 հազար դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում Հայաստան են մատակարարվել թափոնների տարանջատված հավաքագրման թափոնամաններ, ինչպես նաև նշված թափոնամաններից ապակյա թափոնների հավաքագրման համար կռունկով և կեռով թվով 2 բեռնատար մեքենա: Երևան համայնքի կողմից համաֆինանսավորում չի իրականացվել:

62. <u>Շրջակա միջավայրի պաշտպանության ենթակառուցվածքների զարգացում</u> ծրագրով փաստացի ծախսը նախատեսված 261,540.7 հազար դրամի դիմաց կազմում է 173,110.2 հազար դրամ՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից 63,101.7 հազար դրամով ավելի, և իրականացվել են «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն»-ի վերանորոգման աշխատանքները, ավարտին են հասցվել Թեյշիբաինի 8/8 հասցեում «Կենդանիների վնասազերծման կենտրոն» ՊՈԱԿ-ի ադմինիստրատիվ շենքի կառուցման աշխատանքներ, շարունակվել են «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» հիմնարկի արտադրական մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները:

63. <u>Երևանյան լճի և Հրազդան գետի բնապահպանական պաշտպանում և մաքրում</u> ծրագրով նախատեսված 5,000.0 հազար դրամի դիմաց իրականացվել է 3,997.0 հազար դրամի ծախս, կատարողականը կազմել է 79.9%, որի շրջանակներում իրականացվել են Հրազդան գետում ճահճային բուսականության ոչնչացման ծառայություններ:

64. <u>Բնապահպանական կայանների կառուցում</u> ծրագրով նախատեսված 256,209.5 հազար դրամի դիմաց փաստացի իրականացվել է 6,996.0 հազար դրամի նախագծային աշխատանքներ: Գումարը տրամադրվել է 2023թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա: Ծրագրի շրջանակներում սկսվել են Վերին Շենգավիթ 1-ին և 2-րդ փողոցների 2-րդ փակուղիների միջնամասում՝ Գետառ գետի հունի վրա կեղտաջրերի մաքրման կայանի կառուցման աշխատանքներ, որոնց ավարտը նախատեսվում է 2024թվականին:

65. <u>Ինքնակամ կառույցների քանդում</u> ծրագրով փաստացի ծախսը կազմել է 56,417.4 հազար դրամ՝ նախատեսված 80,000.0 հազար դրամի դիմաց նախորդ տարվա ցուցանիշից ավելի 35,727.8 հազար դրամով, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 70.5%, որի շրջանակներում քանդվել են այն ինքնակամ կառույցները, որոնք հնարավոր չի եղել

իրականացնել կառուցապատողների հաշվին, ապամոնտաժվել են նաև ապօրինի գովազդային վահանակները:

66. **<u>Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների կողմից վարձակալած բնակարանների փոխհատուցում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 5,324.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 6,064.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 87.8%, որն ուղղվել է վերաբնակեցված թվով 3 ընտանիքների համար բնակարանների վարձակալությանը:

67. **<u>Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերում</u>** ծրագրով նախատեսված 815,570.0 հազար դրամի դիմաց կատարվել է 52,190.0 հազար դրամի ծախս, որի շրջանակներում իրականացվել է բնակարանի գնման վկայագիր ստացած շուրջ 4 քաղաքացիների կողմից ձեռք բերած բնակարանների դիմաց փոխհատուցումը: Ծրագիրը կշարունակվի 2024 թվականին:

68. **<u>Ջրամատակարարման ցանցի կառուցում և վերակառուցում</u>** ծրագրով նախատեսված 8,200.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 7,333.8 հազար դրամ՝ որպես Նուբարաշեն վարչական շրջանի ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքներ:

69. **<u>Պետական աջակցությամբ իրականացվող կոյուղատար համակարգի արդիականացում և ընդլայնում</u>** ծրագրով որպես պատվիրակված լիազորություններ, նախատեսված 407,906.2 հազար դրամի դիմաց 390,285.8 հազար դրամով իրականացվել է Վերին ջրաշեն համայնքի և Նորք Մարաշ Գ. Հովսեփյան 91 հասցեից թիվ 61 դպրոց, Արմենակյան փողոց տանող կոյուղատար համակարգի կառուցման աշխատանքներ:

70. **<u>Շենքերի գեղարվեստական լուսավորում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 93,319.7 հազար դրամ, ինչը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից ավել է 27,258.7 հազար դրամով՝ նախատեսված 100,319.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 93.0%, որն ուղղվել է Էրեբունի վարչական շրջանի Սասունցի Դավթի հրապարակամերձ շենքի և Շենգավիթ վարչական շրջանում Գ. Նժդեհի փողոցի շենքերի LED տեսակի լուսավորության ցանցի վերականգնմանը և պահպանմանը:

71. **<u>Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,624,729.0 հազար դրամ՝ նախատեսված 1,631,251.0 հազար դրամ գումարի դիմաց, որից 1,500,000.0 հազար դրամ գումարը հատկացվել է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա: Նշված գումարն ամբողջությամբ ուղղվել է «Երքաղլույս» ՓԲԸ-ի պահպանման ծախսերին՝ աշխատավարձ, էլեկտրաէներգիա և ընթացիկ նորոգման աշխատանքներ:

72. **<u>«Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության ծրագիր</u>»** **<u>դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ), «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության ծրագիր</u>»** **<u>(պատվիրակված լիազորություններ)</u>** **և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող** **<u>«Երևանի քաղաքային լուսավորության</u>»** **<u>դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրերի փաստացի ծախսը կազմել է 103,873.9 հազար դրամ նախատեսված 160,529.5 հազար դրամի դիմաց, կամ 64.7%: Ծրագրի շրջանակներում Մյասնիկյան պողոտայում, Աճարյան և Ամիրյան փողոցներում իրականացվել են խրամուղիների փորում, Փ 110 և Փ 75 պլաստիկե խողովակաշարերի անցկացում, ստորգետնյա պլաստիկե խողովակաշարերում մալուխների անցկացում, հենասյուների բետոնե հիմքերի պատրաստում և հենասյուների, հենասյուների բարձակների, ԼԵԴ լուսատուների, լուսատուների ղեկավարման սարքերի և կառավարման համակարգի էլեմենտների մոնտաժում:

73. **<u>Արտաքին լուսավորության ցանցի արդիականացում</u>** ծրագրով նախատեսվել է 107,297.6 հազար դրամ գումար, որի փաստացի ծախսը կազմել է 76,398.3 հազար դրամ կամ 71.2%, որով իրականացվել են Ազատության հրապարակի արտաքին լուսավորության ցանցի բարելավման, Աշտարակի խճուղու և Հանրապետության հրապարակի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքներ, ինչպես նաև կատարվել են խորհրդատվական ծառայությունների վճարումներ Երևանի քաղաքապետարանի և «Փի Ընդ Սի Քոնսալթինգ Քո.-ի Հայաստանյան մասնաճյուղ»-ի միջև ստորագրված լուսավորության համակարգի մատակարարման և տեղադրման վերահսկողության պայմանագրի

շրջանակներում: Ծրագրի շրջանակներում իրականացվել են քաղաքային լուսավորության համակարգերի էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքեր Աջափնյակ, Մալաթիա-Սեբաստիա, Դավթաշեն, Նոր Նորք, Նուբարաշեն, Շենգավիթ, Նորք Մարաշ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններում:

74. **<u>Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 4,297.3 հազար դրամ՝ նախատեսված 14,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 30.7%, որն ուղղվել է թվով 23 հասցեներում սեյսմիկ հետազոտման և ինքնակամ կառույցների օրինականացման ընթացքում շինությունների հետազոտման աշխատանքներին և սողանքի առաջացման ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններին: Աշխատանքներ են իրականացվել մասնավորապես հ.57, հ.126, հ.32, հ.31, հ.55, հ.139, հ.26, հ.37, հ.87, հ.108, հ.159, հ.148, հ.80, հ. 147, հ. 64, հ.125, հ. 85 մանկապարտեզների, հ. 35 հիմնական դպրոցի, Թեյշեբանի փողոց 1, Լենինգրադյան փողոց 33 հասցեների շենքերում, «Էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի մասնաշենքում:

75. **<u>Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 328,266.8 հազար դրամ՝ նախատեսված 334,256.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.2%, որի սահմաններում մայրաքաղաքի 10 վարչական շրջաններում նորոգվել են թվով 244 բազմաբնակարան շենքերի շուրջ 59,342.8քմ հարթ տանիք:

76. **<u>Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում</u>** ծրագրով նախատեսված 434,898.3 հազար դրամի դիմաց 339,115.6 հազար դրամով Երևանի 10 վարչական շրջաններում հիմնանորոգվել կամ մասնակի նորոգվել են են շուրջ 71 թեք տանիք, մասնավորապես՝ Աճառյան 18, Ազատության պողոտա 21, 25, Կիևյան 14, 18, Ավանեսովի 12, Նոր Արեշ 15 փող 7, Էրեբունի փող 11, Նալբանդյան 29,39, Փարպեցի 28 Մյասնիկյան 2, 4, Տ. Մեծի 31Ա, 12, Սայաթ-Նովա 5, Թումանյան 2, Տպագրիչների 8, Բակունցի 1 նրբ 2, Գյուլիքեխվյան 25/1, Լյուքսեմբուրգի 13, 1 նրբ. 4. , Շոպրոնի 2 նրբ. 5շ, 3 նրբ. 5շ. , Թոթովենցի 1/1 շ, Նուբարաշեն վարչական շրջանի 6-րդ փողոցի 112,113 շենքեր, 11-րդ փողոցի 7 , 14 շենքեր, Տիգրանյան 20 շ. Ազատության 2, 4 շ. Զ.Սարկավագի 147, 129/2, 123/3, 117/1, 145/1, 129/3, 121/1, շ. Յան Ռայնիսի 7, 13 շ. Ռուբինյանց 2/1, 12/1, 21/3, 21/2, 16/1, 19 Գոգոլի 5ա, 3 շ.շ Մ.Ավետիսյան 4 փող.22, 18 շ., Մ.Ավետիսյան 18 շ., Մ.Ավետիսյան

2փող.15, 13 շ. Տիգրանյան 20 շ.բն.24 Լեփսիուսի 5, 33, 41, 19 շենքերի տանիքները, ինչպես նաև 86,749.5 հազար դրամով ձեռք է բերվել տանիքների նորոգման համար շին.նյութ, որը տրամադրվել է համատիրություններին՝ տանիքների նորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

77. <u>Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում</u> ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 4,692.190.8 հազար դրամ նախորդ տարվա ցուցանիշից 3,059,195.1 հազար դրամով ավելի՝ նախատեսված 5,471,148.3 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 85.8%, որից 86,999.4 հազար դրամի շրջանակներում համատիրություն-վարչական շրջան համագործակցության շրջանակներում իրականացվել են բակային տարածքների պահպանման ընթացիկ աշխատանքներ, ինչպես նաև 249,336.0 հազար դրամը ուղղվել է բակերի ընթացիկ նորոգմանը, նստարանների, զրուցարանների և խաղերի ընթացիկ նորոգման, ներկման աշխատանքներին, 4,095,890.4 հազար դրամը բակային տարածքներում խաղահրապարակների և միջբակային աստիճանների կառուցմանը և հիմնանորոգմանը, 259,965.0 հազար դրամով ձեռք բերվել և մանկական խաղահրապարակներում և բակային տարածքներում տեղադրվել են ռետինե հատակներ, արհեստական խոտածածկեր, ճոճանակներ, սահարաններ, նստարաններ և զրուցարաններ: Իրականացվել են տիպային մարզահրապարակների կառուցման աշխատանքներ Նալբանդյան 21, Կիևյան 4, 6, 8, 10, ինչպես նաև 12 և 14 միացյալ, 16-րդ թաղամասի 3-րդ շղթայի բակերում, իրականացվել են հ. 108 դպրոցի հարակից ֆուտբոլի դաշտի վերանորոգման աշխատանքներ: Ընդհանուր նորոգման և բարեկարգման աշխատանքներ են իրականացվել նաև վարչական շրջանների շուրջ 182 բակերում, մասնավորապես, հետևյալ հասցեներում. Կիևյան 13, Բաղրամյան 50ա և 50բ, Թբիլիսյան խճուղի 33/3, Ա.Խաչատրյան 33/1, Սոսեի փ 2-րդ նրբանցք N8, Փափազյան 26, Աէրացիա 2/6, Արտաշիսյան 59, 59/1, 65, 61, 67, 63, 63/1 և Չեխովի 48,50,52, Նիզամի 2, Արշակունյաց 135, Ե.Թադևոսյան 12/5, Շարուրի 10,12, Ն. Շենգավիթ 11փողոց 37/3 և 37/1, 39 և 35, Մանթաշյան 4/1, 4/2, 4/3, Վ. Շենգավիթ 2 փող 7, 7/2, Արշակունյաց 135Դ, Արտաշիսյան 62, Ե. Թադևոսյան 19, Ն. Շենգավիթ 11 փողոց 35 և 35/1, Ս. Տարոնցու 1, 1/1, Մայիսի 9-ի 51, Չեխովի 8/1, Բագրատունյաց 43, Բագրատունյաց 33, Արշակունյաց 42-3, Մայիսի 9-ի 49, Չեխովի 6, Արշակունյաց փողոց 50 և 50/1, Շևչենկո 1, Շարուրի 24, 24/2,

24/3, Շիրակի 2, Արարտյան 64,66, Վ. Շենգավիթ 2 փող 9, Արտաշիսյան 37, Աէրացիա 2/5, Արշակունյաց 52 ,52/1, Արշակունյաց 44/2, Եղ. Թադևոսյան 18, 20, Բագրատունյաց 38, 38ա, Ռաֆֆու փող. 59, 61 և 69, Շերամի 105, Բագրատունյաց 13, Շիրակի 4-րդ նրբանցքի 6 և 10, Արշակունյաց 48-2,48-3, Ս. Տարոնցու նրբ 11, Շերամի 113, Իսակովի 26 շենքերի, Օհհանովի 72-ից դեպի Մալաթիա փող. հ.94/4 և 94/6 տներ տանող անցուղու աստիճաններ, Անդրանիկի փող. 75, 100, Սվաճյան փող.հ.52, Լենինգրադյան փող. 22, 31/1, 31/2, 31/3 և 31/4, Բաբաջանյան փող.հ.127, Ռաֆֆու փողոց 103, Ս. Կապուտիկյան 2, Տիգրան Մեծ 18, Վարդանանց 5ա, Բարձրաբերդի 24, Ծովակալ իսակովի անցումից դեպի Նորագյուղ, Ամիրյան 12, Սարյան 24 Ա, Չարենցի 68-70, Քոչար 5, 9, Մյասնիկյան 2-4, Վարդանանց 5ա, Ե. Քոչար 13, Քոչար 21, Եր. Քոչար 5, 9, Միասնիկյան 2-4, Չարենցի 68-70, Թումանյան 35ա, Նալբանդյան 29,31,33, Տերյան 83, Բայրոն 12, Նալբանդյան 25/14, Թումանյան 35, Երվանդ Քոչար 13, Վարդանանց 5ա, Տիգրան Մեծի 18, Նալբանդյան 51, Վարդանանց 5ա, Անտառային 144, Ամիրյան փ-ից դեպի Սարյան ներբակային աստիճաններ, Դավթաշեն 1ին թաղ. 9 շենքի և 10-10Ա շենքեր, Դավթաշեն 2-րդ թաղ. 23,24 շենքի բակեր Դավթաշեն 3-րդ թաղ. 17-18 շենքեր Դավթաշեն 4-րդ թաղ. 30-31 շենքերի բակեր Դավթաշեն 4-րդ թաղ.10 շենքի բակ, Դավթաշեն 2-րդ թաղ. 17, 18, 19, 20 շենքեր, Անտառային 144, 158, Ս. Կապուտիկյան 2, Թումանյան թաղ. 11, Ավան-Առինջ 1-ին մկշ. 2/3, թիվ 87 դպրոց, Աճառյան 18, 36, Խուդյակով 68, Նարեկացի թաղ. 38, 43, 44շ, Դուրյան 28շ-Չարենց 16շ, Չարենց 16շ,-Թամրուչի փողոց, Դուրյան թ. 30, 33, 35, 36, 37, 38շ, 42, 50, Նարեկացի թ.38, Ավան–Առինջ թաղ. 2-րդ մկշ. 2/10շ, թիվ 180 դպրոց, 2/5-Տաշքենդի փողոցի նրբանցք, Ավան–Առինջ թաղ. 2-րդ մկշ. 2/7-2/5, Քուչակ թ. 19, 23, 48, 49շ-Թումանյան թ. 12/1շ, Դուրյան թ. 38-Սաֆարյան փ., Դուրյան թաղ. 37-39շ, Հ. Հովհաննիսյան թ. 26/2, Բաբաջանյան փ.-Ալմա-Աթա փ. թիվ 170 դպրոց, Շիրազի 50, Էստոնական 12, Բաշինջաղյան 1-ին նրբ.10շ, Շինարարների 13, Էստոնական 11, Բաշինջաղյան 1-ին նրբ.16, Հալաբյան 7, 24, 26, Արզումանյան 13, Շինարարների 27, Հալաբյան 65, Շիրազի 42, Ֆուչիկի 2 նրբ. 5,7, Հասրաթյան 10 Արցախի պողոտա 10վ և 10գ Աթոյան անցուղի 12, Նոր Արեշ 42փող. 1 և 2, Տիգրան Մեծ պող. 61, Խաղաղ Դոնի 1, 27, շենքերի բակի մինի ֆուտբոլի դաշտ, Նուբարաշենի խճ. 5/1, 5/2, Ավանեսովի 4, 7, 20, 2/1, 26 Խաղաղ Դոնի 1/1, 1, 23, 35, 31, Գլինկայի փողոցի 23, Մուշական 1-ին փողոցի 1/3, Ջրաշեն 1-ին փողոցի 38/1, հ.134 դպրոցին

հարակից խաղահրապարակ, հ.164 դպրոցին հարակից խաղահրապարակ, Վիլնյուսի փողոցից դեպի 8-րդ զ. 36շենք, հ.198 դպրոցից դեպի Վիլնյուսի փողոց հ.111 շենք իջնող, Հրաձգարանի հարակից տարածք, Գյուրջյան փողոցից դեպի հ.163 դպրոց , Մոլդովական փողոց հ.1 շենքից դեպի Մոլդովական փողոց, Գայի պողոտա հ.1 շենքից դեպի Մալյան փողոց հ.2 շենք, Լյուքսեմբուրգի 5 շենքի հարակից, Հովհաննիսյան 6շ-ից դեպի Գայի 39 շ. իջնող աստիճաններ, Թոթովենց փողոցից դեպի հ.164 դպրոց, Քոչարյան 4 շ/հարակից, Նոր Նորքի 7 զ. 31-34 շենքների աստիճաններ, Նորքի 9-րդ զանգվածի Վիլնյուսի 85 շենքին հարակից տարածք, Բակունցի 13/2 շենքին հարակից խաղահրապարակ և ֆուտբոլի դաշտ, Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի 7-րդ զանգ. 2 շենքի հարակից բակային տարածք, Սաֆարյան 12 շենքի հարակից տարածք, 9-րդ զանգված Վիլնյուսի 115, Դ. Մալյան նրբ. 4, Գյուլիքեխվյան նրբ. 2 շ, Բակունց 13/1շ, Նորքի 7զ. 13, Լյուքսեմբուրգի 11, Նորքի 7զ 34,34,36, Մառի 7 թիվ 157 դպրոցի հարևանությամբ մինի ֆուդբոլի դաշտ, Այծեմնիկ Ուրարտուի փողոց 1-ին նրբանցք, Թիվ 123 մանկապարտեզի հարևանությամբ հիշատակի պուրակ, Նուբարաշեն 6 փողոցի 1/4 շենք, 6փ 1 նրբ բակ, 12փ 4, 11փ 1, 6փ 150 շենքի բակեր, 6փ 1/4 շենքի վոլեյբոլի դաշտ, Վ. Վահյան փող. հ.1 շենք և Կ. Ուլնեցու փող. 3-րդ փակ. 4-րդ շենքի հարակից տարածքի ֆուտբոլի դաշտեր, Կ. Ուլնեցու 1 փակ. հ. 1 շ., Սուրենյան փող. հ. 11ա, Դրոյի 10,12,14, Ռայնիսի 105/4, Տիգրանյան 5, Ուլնեցու 51, Լեփսիուսի 21 և 23 բակեր, ինչպես նաև թիվ 98, 87, 177, 121, 152 դպրոցների տարածքում ֆուտբոլի դաշտի, Իսակովի պող. 52/2, 52/3 շենքերի դիմաց գտնվող տիպային ֆուտբոլի դաշտերի բարեկարգում, աստիճանների կառուցում և հիմնանորոգում, ինչպես նաև Նարեկացի թաղամասի եկեղեցու հարակից տարածքի բարեկարգում:

78. **<u>Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 683,091.3 հազար դրամ՝ նախատեսված 729,696.1 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 93.6%, որի շրջանակներում 620,040.8 հազար դրամով վերանորոգվել կամ մասնակի նորոգվել են բազմաբնակարան շենքերի թվով 326 շքամուտքեր, տեղադրվել են դռներ, փոխվել են լուսամուտները: Աշխատանքների կազմակերպման արդյունավետությունն ապահովելու նպատակով մուտքերի նորոգման աշխատանքներ են իրականացվել նաև համատիրություն-վարչական շրջան համագործակցության շրջանակներում ուղղակի պատվերի եղանակով: 12,406.0

հազար դրամով շենքերի մուտքերի համար ձեռք են բերվել և տեղադրվել տնտեսող ԼԵԴ լամպեր:

79. **<u>Ջրային կառույցների շահագործում և պահպանում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 460,000.0 հազար դրամ՝ նախորդ տարվա ցուցանիշից 125,000.0 հազար դրամով ավելի՝ նախատեսված 506,000.0 հազար դրամ գումարի դիմաց, որն ուղղվել է թվով 39 ջրային կառույցների պահպանմանը:

80. **<u>Կաթսայատների և գույքերի պահպանում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 15,450.2 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որն ամբողջությամբ ուղղվել է Երևանի սեփականություն հանդիսացող կաթսայատների պահպանմանը:

81. **<u>Վթարային պատշգամբների նորոգում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 60,542.8 հազար դրամ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից 33,227.4-ով ավելի՝ նախատեսված 108,551.6 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 55.8%, որի սահմաններում հիմնանորոգվել են Արաբկիր, Էրեբունի, Նոր Նորք և Շենգավիթ վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի շուրջ 169 վթարային պատշգամբներ:

82. **<u>Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 286,818.1 հազար դրամ՝ նախատեսված 287,887.7 հազար դրամի դիմաց, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.6%: Ծրագրի շրջանակներում կնքվել են պայմանագրեր 6 անուն թվով 27 բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով, որոնք են՝ 2 հատ շարժական ուլտրաձայնային համակարգ 3 տվիչով և 2 հատ շարժական ռենտգեն ապարատ, 1 ստացիոնար ռենտգեն ապարատ, 5 շարժական ռենտգեն ապարատ, 3 թվային ստացիոնար ուլտրաձայնային համակարգ 3 տվիչով և թվով 14 ավտոկլավ և տրամադրվել են Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպություններին:

83. **<u>Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 666,510.2 հազար գրամ գումար՝ նախորդ տարվա ցուցանիշից 166,440.2 հազար դրամով ավելի, որի փաստացի ծախսը կազմել է 447,214.7 հազար դրամ, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 67.1%: Ծրագրի շրջանակներում իրականացվել են թիվ 12 և թիվ 5 պոլիկլինիկայի հիմնանորոգման աշխատանքները, և Շտապօգնություն ՓԲԸ-ի հ. 1

ենթակայանի շենքի տանիքի նորոգման աշխատանքներ: Շինարարական աշխատանքները ավարտին կհասցվեն 2024 թվականին:

84. **<u>Դժվարամատչելի հետազոտությունների իրականացում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 90,275.0 հազար դրամ՝ նախատեսված 101,300.0 հազար դրամի դիմաց՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից 73,834.5 հազար դրամով ավելի: Փաստացի ցուցանիշի նկատմամբ շեղումը պայմանավորված է նշված բժշկական ծառայությունից օգտվողների քանակով: Նշված ծրագրի շրջանակներում Երևան համայնքի բնակիչներին տրամադրվել է 98 կոնտրաստավորմամբ և առանց կոնտրաստավորման կոմպյուտերային տոմոգրաֆիայի, թվով 96 մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի, 70 մամոգրաֆիայի, թվով 125 կորոնարոգրաֆիայի ծառայություն և սրտի՝ 1 դեղապատ ստենտով ստենտավորման ծառայություն:

85. **<u>Պետական աջակցությամբ իրականացվող առողջապահական կազմակերպությունների հիմնանորոգում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսված 242,208.7 հազար դրամի դիմաց 221,241.9 հազար դրամով հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել Կենտրոնի թիվ 8 պոլիկլինիկայում և «Նոր Արաբկիր առողջության կենտրոն» ՓԲԸ-ում:

86. **<u>Սպորտային միջոցառումների կազմակերպում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 252,942.1 հազար դրամ՝ նախատեսված 276,074.1 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 91.6%, որի շրջանակներում Երևան քաղաքում 2023 թվականին իրականացվել են մի շարք սպորտային միջոցառումներ, այդ թվում Հունահռոմեական ոճի ըմբշամարտի Երևանի բաց առաջնություն միջազգային մրցաշար, մարմնամարզության, ձյուդոյի թենիսի Երևանի բաց առաջնություն, աթլետիկայի հուշամրցաշար նվիրված ՀՀ վաստակավոր մարզիչ Զաուրի Սարգսյանին, Շախմատի, հաշմանդամություն ունեցող անձանց մարզական սպարտակիադա, Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված մարզամշակութային միջոցառում, շաշկու, հաշմանդամություն ունեցող անձանց բազկամարտի Երևան քաղաքի առաջնություն, Երևանցի տարեցների մրցույթ՝ 5 մարզաձևերից, սամբոյի, հեծանվասպորտի, կրոսավազքի, հանդբոլի, սուսերամարտի, վոլեյբոլի Երևան քաղաքի առաջնություններ, ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների

2023թ. սպարտակիադա, 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև 2023թ. անցկացվող սպորտլանդիա, հրաձգության, սթրայքբոլի, ֆուտզալի բաց առաջնություն Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմի աշխատակիցների միջև, հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային մրցաշար, Ռուդոլֆ և Եղիշե Կարապետյանների հիշատակին նվիրված ազատ ոճի ըմբշամարտի միջազգային մրցաշար, «ունահռոմեական ոճի ըմբշամարտի հուշամրցաշար՝ նվիրված Հ. Խաչատրյանին և Ա. Մնացականյանին, թեթև աթլետիկայի մրցաշար Օլիմպիական հույսեր, 2023թ. տարեվերջյան պարգևատրում՝ Երևան քաղաքի լավագույն մարզիկներին, Համահայկական 8-րդ խաղերի համար հյուրանոցային ծառայությունների ապահովում Գյումրի, Դիլիջան, Ծաղկաձոր և Շորժա քաղաքներում: Մասնավորապես, 24,740.0 հազար դրամով Համահայկական ամառային 8-րդ խաղերի շրջանակներում ձեռք են բերվել մարզական կոշիկներ և մարզահագուստ: 10.131.8 հազար դրամ գումարը ուղղվել է Երևանի ենթակայությամբ գործող մարզադպրոցների սաների և մարզիչների գործուղման ծախսերին ՀՀ և միջազգային առաջնություններին մասնակցության ապահովելու համար: 8,500.0 ՀՀ դրամ գումարը հատկացվել է «Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիա» ՀԿ–ին «Ազատ ոճի ըմբշամարտի Երևանի բաց առաջնություն միջազգային մրցաշար» և «Մենապայքարային մարզաձևերի ասոցիացիա» ՀԿ-ին «Գնել Մեջլումյանի հիշատակին նվիրված ազատ ոճի ըմբշամարտի պատանեկան միջազգային 17-րդ մրցաշար» մրցաշարերը կազմակերպելու համար, իսկ 12,346.6ՀՀ դրամ գումարը հատկացվել է ֆեդերացիաներին Երևանի մարզիկների գործուղման ծախսերը հոգալու համար: Ծրագրի շրջանակներում 40,000.0 հազար դրամ հատկացվել է Հայաստանի Հանրապետությունը միջազգային ասպարեզում ներկայացրած, Աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում մրցանակակիր դարձած և 2024 թվականի Օլիմպիական ուղեգիր նվաճած երևանցի թվով 10 մարզիկ-մարզուհիներին և իրենց մարզիչներին որպես դրամական պարգևատրում:

87. **<u>Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,262,287.1 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 1,616,400.1 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 78.1%, որից 25,842.0 հազար դրամը ուղղվել է Սիրահարների զբոսայգու պահպանմանը, 35,042.8 հազար դրամը Հաղթանակ զբոսայգու Անմար կրակի գազամատակարարման և այգիներում

էլեկտրաէներգիայի մատակարարման, 4,907.5 հազար դրամը Երևանի 2800-ամյակի այգու ջրամատակարարման ծառայությանը: 239,712.4 հազար դրամն ուղղվել է 2-րդ աշխարհամարտում տարած Հաղթանակի 40-ամյակի այգու հուշահամալիրի և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներին, 46,150.6 հազար դրամը Երևանյան լճի աջակողմյան ափամերձ տարածքի բարեկարգման աշխատանքներին, 58,670.2 հազար դրամը Խ. Աբովյանի անվան պուրակի վերականգնման աշխատանքներին, 10,071.6 հազար դրամը Երևանի քաղաքապետարանի շենքի դիմաց գտնվող կանաչապատ տարածքի ճեմուղու նախատեսման աշխատանքներին, 32,160.4 հազար դրամը Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի հարակից տարածքի հիմնանորոգման աշխատանքներին: Նոր Արաբկիր զբոսայգու ջրավազանների ջրահեռացման համակարգի բարելավման աշխատանքներին է ուղղվել 3,459.9 հազար դրամ, Նոր Նորքի 2-րդ զանգվածի Վերածննդի այգու բարեկարգման աշխատանքներին 82,711.1 հազար դրամ, վարչական շրջաններում շատրվանների պոմպերի վերանորոգման և նորերի կառուցման աշխատանքներին ուղղվել է 17,315.3 հազար դրամ: Բարեկարգվել են Արաբկիր Քանաքեռ ՀԷԿ 2, 4, 5, 7, 8, 10 համատեղ այգին, Դավթաշեն 1 թաղ. և 200 դպրոցի հարակից տարածքը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի երիտասարդական այգում կառուցվել է արտաքին լուսավորության ցանց, բարեկարգվել է Տորք Անգեղ արձանի հարակից տարածքը և Գայի 37շ. հարակից այգին, Նուբարաշենի 7 փողոցի հարակից այգին, Քանաքեռ-Զեյթունի Մինաս Ավետիսյանի պուրակը, ինչպես նաև Նոր Նորք վարչական շրջանում կառուցվել է շների զբոսայգի:

88. **<u>Սպորտային գոտիների և մարզական կենտրոնների կառուցում և պահպանում</u>** ծրագրով նախատեսվել է 92,911.7 հազար դրամ: Ծրագրի փաստացի ծախսը կազմել է 86,350.8 հազար դրամ, կամ 92.9 %, որի շրջանակներում իրականացվել են Նոր Նորքի 8-րդ զանգվածի 186 դպրոցի հարակից ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքներ, ավարտվել են Շենգավիթ վարչական շրջան Կարմիր բլուրի արգելանոցի կառուցապատման աշխատանքները, կառուցվել է Ա-3 թաղամասի 179 դպրոցի ֆուտբոլի դաշտը, վճարումն իրականացվել է որպես 2022թվականի պարտքի մարում:

89. **<u>Պետական աջակցությամբ իրականացվող հանգստի գոտիների կառուցում և հիմնանորոգում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով 675,665.2 հազար դրամի դիմաց փաստացի 531,081.9 հազար դրամ վճարվել է Նոր Նորքի սբ. Սարգիս եկեղեցու և

Դավիթ Բեկի միջնամասի այգու բարեկարգման, Դավթաշեն 1 և 2 թաղամասերի կենտրոնական այգու բարեկարգման և սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շատրվանների կառուցման աշխատանքների համար:

90. **<u>Երևանի բուսաբանական այգու տարածքում անտառպուրակի կառուցման աշխատանքներ (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսված 250,000.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 246,340.1 հազար դրամ՝ 98.5 %:

91. **<u>Գրադարանային ծառայություններ</u>** ծրագրով նախատեսվել է 682,914.7 հազար դրամ գումար, որից 679,882.2 հազար դրամն ուղղվել է Երևանի համայնքային թվով 19 գրադարանային կազմակերպությունների սուբսիդավորմանը:

92. **<u>Գրադարանների համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում</u>** ծրագրով նախատեսված 40,000.0հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմում է 39,310.2 հազար դրամ կամ 98.3 %, որի շրջանակներում ձեռքբերվել և Երևանի գրադարաններին է տրամադրվել շուրջ 482 անուն թվով 12,632 գրքեր:

93. **<u>Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 353,391.2 հազար դրամ՝ նախատեսված 357,830.4 հազար դրամի դիմաց, որից 297,759.3 հազար դրամը հատկացվել է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ թվով 4 թանգարանների պահպանման համար, իսկ տարբերություն 55,631.9 հազար դրամը հատկացվել է Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեից, որից 12,049.7 հազար դրամը՝ «Երևանի Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար:

94. **<u>Թանգարանների նորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 9,143.0 հազար դրամ, փաստացի ծախսը կազմել է 8,733,6 հազար դրամ, կամ 95.5%, որով իրականացվել են Երևանի Ֆրիտյոֆ Նանսենի անվան թանգարանի, Ալ. Սպենդիարյանի անվան տուն-թանգարանի հիմնանորոգման և Ժամանակակից արվեստի թանգարանի ջրամատակարարման և կոյուղատար համակարգի ընթացիկ նորոգման աշխատանքներ:

95. **<u>Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 529,843.3 հազար դրամ՝ նախատեսված 533,336.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.3%՝ թվով 13 մշակույթի կենտրոնների պահպանման համար:

96. **<u>Մշակութային միջոցառումների իրականացում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,755,776.3 հազար դրամ՝ նախատեսված 1,857,250.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 94,5%, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի և 12 վարչական շրջանների կողմից կազմակերպված մշակութային միջոցառումները, որոնցից են Արտիստը դպրոցին, Ամանորի և Սուրբ ծնունդին նվիրված միջոցառումներ, Երևանը կանանց համար, Հայոց բանակի, Կանանց տոնին նվիրված միջոցառումներ, Երևանի երաժշտական և արվեստի դպրոցների մրցույթ-փառատոն, Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա ստուգատես-փառատոն, կայուն էներգիայի շաբաթ միջոցառում, Մեծ Եղեռնի հուշահամալիրում ձևավորման ծառայություններ, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան նվիրված մշակութային միջոցառումների իրականացման ծառայություններ, գիրք նվիրելու օրվան, Ջազի միջազգային օրվան նվիրված մշակութային միջոցառումներ, կինոփառատոնի 20-րդ հոբելյանական միջոցառումներ, երեխաների իրավունքների պաշտպանության օր, Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին նվիրված մշակութային միջոցառումների իրականացում և այլ միջոցառումների կազմակերպմանը:

97. **<u>Կենդանաբանական այգու ցուցադրություններ</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 429,904.8 հազար դրամ՝ նախորդ տարվա 728,510.1 հազար դրամի դիմաց, որից 308,016.7 հազար դրամը հատկացվել է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար: Տարբերություն 121,888.1 հազար դրամ գումարը տրամադրվել է Երևան համայնքի 2023թ. բյուջեից վայրի կենդանիների պահպանման, ցուցադրման, անհետացող տեսակների բազմացման համար:

98. **<u>Կենդանաբանական այգու հիմնանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 58,967.4 հազար դրամ գումար, որի շրջանակներում 55,093.7 հազար դրամով իրականացվել են կենդանաբանական այգու էլեկտրականության ներքին ցանցի բարելավման աշխատանքներ:

99. **<u>Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 149,737.4 հազար դրամ՝ 155,185.7 հազար դրամի դիմաց, որն ուղղվել է «Հայ-Արտ մշակութային կենտրոն» ՓԲԸ-ի, «Յուրի Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա» ՀՈԱԿ-ի, «Երևան փողային նվագախումբ» ՀՈԱԿ-ի և «Հայաստանի փոքրիկ երգիչներ մանկական ֆիլհարմոնիա» ՀՈԱԿ-ի պահպանմանը:

100. **<u>Թատերական ներկայացումներ</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 457,064.6 հազար դրամ՝ նախատեսված 457,064.6 հազար դրամի դիմաց և հատկացվել է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ թվով 3 թատրոնների պահպանման համար:

101. **<u>Թատրոնների հիմնանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 503,288.7 հազար դրամ և փաստացի 329,591.0 հազար դրամով կատարվել են Միհեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոնի վարչական շենքի հիմնանորոգման, դահլիճի ձայնային համակարգի պարագաների, բեմի պրոյեկցիոն համակարգի, լուսային համակարգի պարագաների, բեմի կոնստրուկցիաների էլեկտրական ճախարակների համակարգի պարագաների ձեռքբերման, տեղադրման աշխատանքներ:

102. **<u>Հուշարձանների վերանորոգում և պահպանում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 28,909.4 հազար դրամ՝ նախատեսված 83,233.3 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 34.7%, որի շրջանակներում, մասնավորապես, 1,700.0 հազար դրամով իրականացվել են Երևան քաղաքի հուշարձանների լվացման և այն հուշարձանների նորոգման և պահպանման աշխատանքները, որոնք ընդգրկված չեն պետական պահպանության ենթակա հուշարձանների ցանկում: 17,264.4 հազար դրամ գումարը վճարվել է որպես 2022թ. պարտքի մարում 2008թ. մարտի 1-ին Երևանում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ զոհվածների հիշատակի հուշարձանի ձեռքբերման համար, որն էլ հատկացվել էր ՀՀ 2021թվականի պետական բյուջեից 28.10.2021թ. թիվ 1779-Ն որոշումով որպես կապիտալ սուբվենցիա:

103. **<u>ՀՀ պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացում</u>** ծրագրով նախատեսված 19,557.1 հազար դրամ գումարի դիմաց կատարվել է 7,475.5 հազար դրամի ծախս: Նշված գումարը վճարվել է Կարեն Դեմիրճյանի հուշարձանի ձեռքբերման համար:

104. **<u>ՀՀ տեղակայված և տեղակայվող արձանների և քանդակների հարակից հողատարածքների ձեռքբերում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով ՀՀ կառավարության 21.12.23թ. թիվ 2226-Ն որոշմամբ տրամադրված 122,475.0 հազար դրամի սահմաններում իրականացվել է Աշխատանքի հրապարակում գտնվող հանրային գերակա շահ ճանաչված գույքի օտարման դիմաց փոխհատուցում:

105. **<u>ՀՀ տեղակայված և տեղակայվող արձանների և քանդակների հարակից հողատարածքների արժեքի գնահատում և գույքային իրավունքների գնահատում և գրանցում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով ՀՀ կառավարության 21.12.23թ. թիվ 2226-Ն որոշմամբ նախատեսված 225.0 հազար դրամի դիմաց 135.0 հազար դրամով իրականացվել է Աշխատանքի հրապարակում գտնվող հանրային գերակա շահ ճանաչված գույքի գնահատման կադաստրային վճարումներ:

106. **<u>Անդամակցության վճարներ ծրագրով</u>** փաստացի ծախսը կազմել է 15,275.3 հազար դրամ՝ նախատեսված 17,535.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 87.1%, որն իր մեջ ներառում է Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիային, Եվրոպական քաղաքների ասոցիացիային (EUROCITIES), LUCI ASSOCIATION, Հայաստանի համայնքների միությանը, ինչպես նաև «Տեղական իշխանությունները հանուն կայունության» ասոցիացիային հատկացվող գումարները:

107. **<u>Նախադպրոցական ուսուցում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 10,310,473.6 հազար դրամ՝ նախատեսված 10,456,933.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.6%, որի շրջանակներում ֆինանսավորվել են թվով 163 մանկապարտեզ: Գումարը տրամադրվել է փաստացի հաճախող երեխաթվի սկզբունքով, մեկ երեխայի ամսական ուսուցման (պահպանման) ծախսերի միջին ինքնարժեքը հաշվարկվել է 30.0 հազար դրամի չափով, ինչպես նաև յուրաքանչյուր մանկապարտեզի պահպանման ծախսերի համար ամսական հատկացվել է 1,000.0 հազար դրամ: Նորոգվող մանկապարտեզները ֆինանսավորվել են փաստացի ծախսի հաշվարկների հիման վրա: 1,939.6 հազար դրամը ուղղվել է թիվ 175 դպրոցի նախակրթարանի սաների համար սննդի ձեռքբերմանը, իսկ 3,380.0 հազար դրամն ուղղվել է մանկապարտեզների շուրջ 60 սննդի պատասխանատուների վերապատրաստմանը:

108. **<u>Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 76,441.2 հազար դրամ 282,000.0 հազար դրամ գումարի դիմաց, կամ կատարողականը կազմել է 27.1%: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել և Երևան քաղաքի մանկապարտեզներին բաշխվել է շուրջ 26 անուն թվով 9569 գույք, այդ թվում սառնարան, սալօջախ, լվացքի մեքենա, գրապահարան, նստարան, զգեստապահարան, մահճակալ, չորանոց, սեղան, աթոռ, լվացքի մեքենա, աշխատանքային կենտրոն և այլն:

109. **<u>Նախադպրոցական կրթություն (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 27,037.0 հազար դրամ՝ նախատեսված 27,037.0 հազար դրամ գումարի դիմաց, որի շրջանակներում՝ որպես պատվիրակված լիազորություն, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ֆինանսավորվել է «Երևանի հ.175 դպրոց» ՊՈԱԿ-ը:

110. **<u>Սոցիալական որոշ խմբերի 1,5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում /պատվիրակված լիազորություն/</u>** ծրագրի շրջանակներում նախատեսված 745,542.6 հազար դրամի դիմաց 306,837.9 հազար դրամ տրամադրվել է Երևանի նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար:

111. **<u>Պետական աջակցությամբ իրականացվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցում և հիմնանորոգում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսված 725,753.6 հազար դրամի շրջանակներում փաստացի 655,004.4 հազար դրամով իրականացվել է Աջափնյակ վարչական շրջանի թիվ 41, 48, Դավթաշեն վարչական շրջանի թիվ 71, Նոր Նորք վարչական շրջանի թիվ 105, Շենգավիթ վարչական շրջանի թիվ 140 մանկապարտեզների հիմնանորոգում:

112. **<u>Մասնագիտական զարգացման և վարձատրության և վարձատրության փոխկապակցված համակարգի ներդրում նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին տարակարգի շնորհման գործընթացի միջոցով ծրագրով</u>** փաստացի ծախսը կազմել է 187.2 հազար դրամ նախատեսված 249.6 հազար դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն:

113. **<u>Հանրակրթական ուսուցում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 17,932,383.7 հազար դրամ, որի շրջանակներում, որպես պատվիրակված լիազորություն, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով ֆինանսավորվել են Երևանի քաղաքապետարանի կողմից համակարգվող թվով 152 դպրոցները:

114. **<u>Բնագիտական ոլորտի առարկաներ դասավանդող ուսուցիչներին հավելավճարի տրամադրում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով իրականացվել է 93,141.6 հազար դրամի ծախս՝ նախատեսվածի չափով և ֆինանսավորվել են Երևանի քաղաքապետարանի կողմից համակարգվող դպրոցների թվով 1286 ուսուցիչներ:

115. **<u>Արտադպրոցական դաստիարակություն</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 4,706,203.1 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 4,715,916.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.8%, որից՝ որպես ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից հատկացված սուբվենցիա 55,863.0 հազար դրամով ֆինանսավորվել են Երևանի թվով 2 սպորտ-դպրոցներ, իսկ 4,639,737.9 հազար դրամը ուղղվել է երաժշտական, արվեստի դպրոցների, մարզադպրոցների, շախմատի դպրոցների ֆինանսավորմանը, իսկ 3,600.0 հազար դրամ գումարը տրամադրվել է դպրոցականների ամառային հանգստի համար տրանսպորտի վարձակալության ծառայությանը:

116. **<u>Արտադպրոցական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում</u>** ծրագրով նախատեսված 112,637.0 հազար դրամ գումարի դիմաց փաստացի 11,763.9 հազար դրամ գումարով մարզադպրոցների համար ձեռք է բերվել 33 անուն թվով 753 մարզագույք՝ սկավառակ, պտտաձող, գնդակ, ցատկապարան, թենիսի ռակետներ, շախմատի ժամացույց, ցուցադրական խաղատախտակ, մարմնամարզական ներքնակ, բասկետբոլի գնդակ, ծանրամարտի ձող, նետման նիզակներ, դիմակ, մարմնամարզական կամրջակ, բադմինթոնի սարքեր, ձեռնաթիակ, վարժասարքեր, ըմբշամարտի խրտվիլակ, բուլավա և այլ մարզական գույք:

117. **<u>«Հակոբ Կոջոյան</u>»** **<u>կրթահամալիր ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում ծրագրով (պատվիրակված լիազորություններ)</u>** փաստացի ծախսը կազմել է 6,793.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից որպես պատվիրակված լիազորություն՝ հաշվի առնելով կրթահամալիրի առաձնահատկությունները:

118. **<u>Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 60,353.9 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որը հատկացվել է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, որն ուղղվել է Երևան քաղաքի թվով 24 երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների դասարաններում սովորող աշակերտների ուսման վարձավճարների փոխհատուցմանը:

119. **<u>Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում</u>** ծրագրի կատարողականը կատարվել է 92.9 %-ով, և 160,168.1 հազար դրամով՝ նախատեսված 172,320.7 հազար դրամի դիմաց, իրականացվել է Շենգավիթ համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցի նկուղային հարկի, թվով 7 մարզադահլիճի հիմնանորոգման աշխատանքներ, մարզադպրոցի ֆոտովոլտային համակարգի տեղադրում, ինչպես նաև դահլիճի հովացման համակարգի բարելավում: Դավթաշենի Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոցի ցանկապատի կառուցմանը, որպես պարտքի մարում, ուղղվել է 24,875.5 հազար դրամ գումար:

120. **<u>Կամավոր ատեստավորման նոր համակարգի ներդրում ուղղված արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների որակի բարձրացմանը (պատվիրակված լիազորություններ)</u>** փաստացի ծախսը կազմել է 5,792.0 հազար դրամ՝ նախատեսված 6,165.4 հազար դրամի դիմաց:

121. **<u>Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 2,145,253.8 հազար դրամ գումար և ծրագրի շրջանակներում 1,668,526.4 հազար դրամով իրականացվել են Դավթաշեն վարչական շրջանի հ. 61, Աջափնյակ վարչական շրջանի հ. 50 մանկապարտեզների հիմնանորոգման և բակի բարեկարգման, Կենտրոն վարչական շրջանի հ. 1 մանկապարտեզի ապամոնտաժման աշխատանքներ, Ավան վարչական շրջանի հ. 52 մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցման, Շենգավիթ վարչական շրջանի հ. 143 և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ. 77, 95 մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքներ: Բարեկարգվել են Աջափնյակ վարչական շրջանի հ. 49, Դավթաշեն վարչական շրջանի հ. 58, Արաբկիրի հ. 22 և 23 մանկապարտեզների բակերը: 50,750.0 հազար դրամով մանկապարտեզների սենյակներում տեղադրվել են օդի նախնական տաքացմամբ օդափոխման ագրեգատներ,

իսկ 41,665.2 հազար դրամով բոլոր 12 վարչական շրջանների մանկապարտեզներում կատարվել են հրատապ, չնախատեսված ընթացիկ նորոգման աշխատանքներ: 24,973.6 հազար դրամ տրամադրվել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ. 86 մանկապարտեզի բակի բարեկարգմանը՝ որպես պարտքի մարում: Ծրագրի փաստացի կատարողականը կազմել է 77.8 %:

122. **<u>Դպրոցական օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 19,366.3 հազար դրամ՝ նախատեսված 64.900.0 հազար դրամի չափով, որի շրջանակներում գրքի և մայրենիի օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում աշակերտներին տրամադրվել է 4 անուն շուրջ 468 գիրք, կազմակերպվել են դպրոցականների առարկայական օլիմպիադաներ՝ Երևանի հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների մասնակցությամբ, ապահովվել են պայմաններ առարկայական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպման համար: Իրականացվել են կիրառական ռազմագիտության մրցույթներ, դաստիարակների և դայակների մեթոդական վերապատրաստում, մանկավարժների, տնօրենների խրախուսում, և այլն:

123. **<u>Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում (պատվիրակված լիազորություններ), Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում (պատվիրակված լիազորություններ), Ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը (պատվիրակված լիազորություններ), Հանրակրթական դպրոցներին գույքով եւ տեխնիկայով ապահովում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսված 487,840.9 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 438,156.7 հազար դրամ:

124. **<u>Հարազատ չունեցող անձանց հուղարկավորության կազմակերպում</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 12,578.0 հազար դրամ՝ նախատեսված 18,601.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 67.6%:

125. **<u>Երեխայի իրավունքների եւ շահերի պաշտպանություն և Ընտանիքում երեխայի ապրելու իրավունքի ապահովում</u>** ծրագրերով ծախսը կազմել է 1,858.1 հազար դրամ

նախատեսված 4,500.0 հազար դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում երեխաները ապահովվել են գրենական պիտույքներով:

126. <u>Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում արդյունավետ կառավարման նպատակով նոր համակարգի ներդրման իրականացում, Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում</u> ծրագրերով նախատեսված 97,938.0 հազար դրամի դիմաց կատարվել է 59,863.8 հազար դրամի ծախս, որի շրջանակներում ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել 2023 թվականի ընթացքում Երևանի քաղաքապետարան դիմած սոցիալական խոցելի խմբերին դասվող բնակչության համապատասխան խմբերին:

127. <u>Հասարակական կազմակերպություններին աջակցություն</u> ծրագրով փաստացի ծախսը կազմել է 161,691.9 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 174,319.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 92.8%, որի շրջանակներում աջակցություն է տրամադրվել թվով 14 հասարակական կազմակերպությունների:

128. <u>Տարբեր սոցիալական խմբերի համար Երևան համայնքում որակյալ սոցիալական ծառայությունների կազմակերպում, Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն, Հայրենադարձ և փախստական ընտանիքներին աջակցություն, Արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքիներին աջակցություն, Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ</u> ծրագրերով նախատեսված 246,005.5 հազար դրամի դիմաց 112,528.9 հազար դրամով բազմազավակ ընտանիքներին տրամադրվել են գույք և կենցաղային տեխնիկա, ձեռք են բերվել սննդի ծանրոցներ, արտակարգ իրավիճակներում հայտնված անձանց բնակարաններում իրականացվել են անհետաձգելի նորոգման աշխատանքներ, կազմակերպվել են ընտանիքի անդամների հուղարկավորություններ:

129. <u>Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ)</u> ծրագրով փաստացի կատարողականը կազմել է 663,102.1 հազար դրամ՝ նախատեսված 666,792.0 հազար

դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 99.4%, որի սահմաններում կրթական ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների և «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ–ի աշխատակիցները ապահովվել են սոցիալական փաթեթով:

130. **<u>Առողջության ապահովագրություն</u>** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 717,422.0 հազար դրամ՝ նախատեսված 749,892.9 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում առողջապահական ապահովագրություն են ստացել Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցները, Երևան հիմնադրամի, ՔԿԱԳ աշխատակիցները, «Երևանտրանս» ՓԲԸ վարորդները, «ԳՇՊՇ» ՓԲԸ սպասարկող անձնակազմը, «Կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի, «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի, «Երևանի ավտոբուս» և «Ջրային կառույցներ», «Երքաղլույս», «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ների, «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրման հիմնարկ»-ի, «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն», «Բնակչության հատուկ սպասարկում», «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ների հաստիքացուցակով նախատեսված հաստիք զբաղեցնող աշխատողները, Երևան հիմնադրամի, ինչպես նաև Երևանի ենթակայության մանկապարտեզների, շախմատի դպրոցների, երաժշտական, արվեստի դպրոցների, մարզադպրոցների, մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական դաստիարակության, մշակույթի կենտրոնների, այլ մշակութային կազմակերպությունների, գրադարանների, թատրոնների և թանգարանների շուրջ 13190 աշխատակիցները:

ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ ծրագրով հաշվետու ժամանակահատվածում Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից 4,992,273.1 հազար դրամը ուղղվել է Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրին՝ Բաբաջանյան-Աշտարակի խճուղու 9.4 կմ երկարությամբ և 24 մ միջին լայնությամբ նոր ճանապարհահատվածի, Արգավանդ-Շիրակ 2.7 կմ երկարությամբ ճանապարհահատվածի 1 կմ հատվածի կառուցման, հողի օտարման և տարաբնակեցման, ինչպես նաև Դեպոյի կառուցման տեխնիկական հսկողության և ծրագրի ֆինանսական աուդիտի ծախսերին:

Վարչական մասի պահուստային ֆոնդից բյուջեի ֆոնդային մաս հատկացվել է 3,117,732.4 հազար դրամ գումար:

Հաշվետու ժամանակահատվածում Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեն կատարվել է 3,664,564.1 հազար դրամ հավելուրդով՝ նախատեսված (ճշտված) 11,232,839.8 հազար դրամ պակասուրդի դիմաց:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ. ԱՎԻՆՅԱՆ